

Գիտություն

ՀՈՒԼԻՍ

№ 4

(198)

2007 թ.

Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

«Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» ռեանանցներ՝ Ռադիկ Մարտիրոսյանին և Վլադիմիր Բարխուդարյանին

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Վեհաբանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Շայրագուն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշաններ հանձնեց ՀՀ ԳԱԱ նախագահ, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ տիար Ռադիկ Մարտիրոսյանին և ԳԱԱ հայոց պատմության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ տիար Վլադիմիր Բարխուդարյանին՝ բարձր գնահատելով նրանց ազգագույն ու եկեղեցաշեն

արդյունաշատ վաստակը:

Շքանշանի հանձնման հանդիսությունը բացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի ողջույնի խոսքով:

ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուքուրյանը և ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը ներկայացրեցին մեծարյալների կյանքի ուղին՝ ընդգծելով նրանց մեծ ներդրումն ու վաստակը գիտության ոլորտում և կարևորելով հայրենի երկրին բերած բազում երախտիքները:

Մեծարյալներին գնահատանքի խոսք ասացին նաև ակադեմիկոսներ Նիկոլայ Հովհաննիսյանն ու Սերգեյ Համբարձումյանը՝ շնորհակալություն հայտնելով Նոբին Սրբությանը՝ մշակույթի ու գիտության գործիչների նկատմամբ մշտապես ցուցաբերվող ուշադրության և գնահատման համար:

Ապա «Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո ներս բերվեցին Հայրապետական սրբատառ կոնդակները և ընթերցվեցին Մայր Աթոռ Սուրբ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



Միլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՄԵՆՔ



Եթե չլինեիր մեր հողը այսպես

Երկու աշխարհի ճամփաբաժանին,
Կամուրջ կդառնա՞ր,
Եկող-գնացող ցեղերի համար.-

Եթե չլինեիր մեր Տիգրան Մեծը այդպես բռնկվող,
Ծանրախոտ լինեիր և չգծովեր
Իր դեզ աներոջ՝ Միրզախանի հետ,-

Եթե չլինեիր Արտավազդ արքան այդքան բանաստեղծ,
Թատերգության տեղ՝ գաղտնագրեր գրեր,
Եվ դեռ գլուխը՝ շողում խոսքերով
Խոնարհեիր չքնաղ Փարավոնուհու
Ոտքերի առջև,-

Եթե չլինեիր ամեն մի իշխան ինքն իրենով լի՝

Ամենից առաջ ինքն իրեն իշխեր,
Խեղդեր իր «եզը»՝ «մենքի» ծովի մեջ.-
Եթե անսայինք ողջամտության վասակյան ձայնին,
Մտքի հաշվարկով հլու ապրեինք,
Ապրեինք սակայն,
Եվ Վարդանի հետ՝ սոսկ սրտին փարած՝
Գոռ չմեռնեի՞նք Ավարայրի մեջ.-
Եթե այդքան կույր, այդքան տենդագին
Չերկրազեղեիր խաչին ու սիրուն
Ու գրչի տեղակ՝ սո՛ւր բանեցնեինք,-

Եվ եթե, եթե, եթե...

Ո՛վ երկինք,
Մինչև ե՞րբ պիտի
Բյուր «եթեների» ալիքներն ընկած
Այսպես տվայտենք
Եվ՝ չազատվելով ինքներս մեզնից՝
Դեռ ավելացնենք, հնին նորե՛րը...
Բայց, ո՞վ իմանա,
Եթե չլինեիր այն, ինչ որ եղավ,
Մենք կլինեի՞նք այն, ինչ որ եղա՛նք...

Երիտասարդ արևելագետների գիտական նստաշրջանը

Երիտասարդ արևելագետների համրապետական 18-րդ գիտական նստաշրջանն ավարտվեց: Նիստերի քննարկմանը ներկայացրած բազմաթիվ զեկուցումները վկայում են ոչ միայն երիտասարդ արևելագետների գիտական ակտիվությունը, այլև այսօրվա հրատապ խնդիրներին, հատկապես մեր հարևաններին և նրանց հետ մեր հարաբերություններին վերաբերող հրատապ խնդիրներին անդրադառնալու միտումը: Նստաշրջանին ներկայացրած թեմաների ցանկին անգամ ծանոթանալը պարզ պատկերացում է տալիս, որ երիտասարդ արևելագետները սկսել են ավելի ակտիվորեն ուսումնասիրել տարածաշրջանի ժողովուրդների պատմությունն ու նրանց վարած քաղաքականությունը:



Թուրքիային վերաբերող զեկուցումների առատությունը վկայում է, որ մենք սկսել ենք ավելի ակտիվ անդրադառնալ մի երկրի պատմությանն ու ներկային, որի ոչ միայն մի մասը մերն է եղել, այլև այն մեր ժողովրդի ծագման ու պատմության բնօրրան է, այսօր, ցավոք, բռնակցված մի պետության, որը կոչվում է Թուրքիա:

Գիտաժողովի նախօրյակին ինստիտուտի ղեկավարությունը լավ նվեր էր պատրաստել, հրատարակելով երիտասարդ գիտաշխատողների զեկուցումների համառոտագրված ժողովածուն: Այն պարզորոշ վկայում է, թե ինչ գիտական շահագրգիռ մթնոլորտ է տիրում ինստիտուտում և ինչ մեծ տեղ է հատկացվում երիտասարդությանը:

Մանրամասները՝ 2-րդ էջում



Անապատի ավազուտները
բացում են գաղտնիքները

Տես 8-րդ էջը

«Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» ԵՖԱՆԵԱՆՆԵՐ՝ Ռադիկ Մարտիրոսյանին և Վլադիմիր Բարխուդարյանին

(Սկիզբը՝ 1-ին էջում)


Էջմիածնի միաբաններ Ս. Արարատ եպիսկոպոս Գալթազյանի և Ս. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի կողմից:

Կոնգրեսների ընթերցումից հետո Նորին Սրբությունը մեծարյալների կողմից զարդարեց «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով:

Շքանշանի հանձնումից հետո երախտագիտության խոսք ասացին մեծարյալները:

Հանդիպությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցու «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» բարձր պարգևը տրվում է կրթության, գիտության և մշակույթի ոլորտի եկեղեցական երախտավորներին, ովքեր շարունակողներն են դառնում Ս. Սահակի և Ս. Մեսրոպի առաքելության: Նորին Սրբությունը իր խոսքում ասաց. «...Մենք մեզ գործը ենք զգում՝ տեսնելով մեր մտավորականությանը կանգնած մեր կողքին, մեր եկեղեցական սպասավորների հետ ծառայության մեջ՝ և հոգևոր և աշխարհիկ ոլորտներում: ...Եկեղեցին միշտ էլ հովանավորող է եղել մեր մշակույթին, գիտությանն ու կրթությանը: Դժբախտաբար այնպիսի ժամանակներ բաժին ընկան մեր եկեղեցուն, որ մաշակառդացավ այդ ոլորտում առավել աջակցություն ունենալ և այդ առաքելությունն ամբողջականորեն իրականացնել: Եկեղեցու առջև խնդիր բարձրացավ վերականգնելու և վերակառուցելու հոգևոր կյանքը: Փառք Աստծո, այսօր եկեղեցու համար զգալիորեն լուծվել են շատ խնդիրներ, և մենք աստիճանաբար Աստծո օրհնությամբ և օգնականությամբ այսի կարողանանք վերադարձնել եկեղեցուն այդ պատվավոր տիտղոսը՝ հովանավոր հայ գիտության, կրթության և մշակույթի»: Նորին Սրբությունը ուրախություն հայտնեց, որ նման բարձր շքանշանով զարդարում է մեր ժողովրդի ու եկեղեցու երկու արժանավոր գավակների կողմից, վերստին բարձր գնահատեց նրանց՝ հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հանդեպ արդյունաշատ գործունեության միջոցով ցուցաբերվող նվիրումը, սերն ու հավատարմությունը և նրանց հսկայական վաստակը մեր մշակույթի ու գիտության անդամատանում:

ՀՀ ԳԱՍ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Տեղի ունեցավ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության հերթական նիստը, որը վարում էր ԳԱՍ պրեզիդենտ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Նախագահությունը հավանություն տվեց Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հետ համատեղ հիդրոէկոլոգիական լաբորատորիա ստեղծելու բնական գիտությունների բաժանմունքի առաջարկությանը: Լաբորատորիան ստեղծվում է հանրապետության մակերևութային ջրերի (գետեր, լճեր, ջրամբարներ) հիդրոէկոլոգիական, հիդրոֆիզիկական, հիդրոքիմիական, հիդրոկենսաբանական և ծննդաբանական ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով:

ՀՀ ԳԱՍ ասպիրանտուրայի ընդունելության արդյունքների մասին հաղորդումով հանդես եկավ ԳԱՍ գիտակրթական կենտրոնի տնօրեն Ալբերտ Սարգսյանը:

Նիստում քննարկվեց արտասահմանում մշտական բնակություն հաստատած ՀՀ ԳԱՍ ակադեմիկոսների պատվովձարի հարցը: Նախագահությունը որոշեց դադարեցնել պատվովձարների վճարումը և վերականգնել դրանք, երբ վերոհիշյալ ակադեմիկոսները կվերադառնան հայրենիք և կանցնեն իրենց պարտականությունների կատարմանը:

ՀՀ ԳԱՍ նախագահության որոշմամբ ստեղծվեց ՀՀ ԳԱՍ կանոնադրության փոփոխությունների հանձնաժողով՝ ԳԱՍ պրեզիդենտ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի ղեկավարությամբ:

ԳԱՍ նախագահության որոշմամբ ակադեմիայի մաթեմատիկայի, մեխանիկայի և ինֆորմատիկայի բաժանմունքը վերանվանվեց Մաթեմատիկայի և տեխնիկական գիտությունների բաժանմունք:

Լեոնիդ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ.

Մարտուններ

«Կանգնեցե՛ք» գոչեց, վրչինը ձեռքին,
Կախարդ ծերունին հուզված փարեքին.
Եվ լուռ, հնազանդ հանձնարի շայնին,
Մութ ալիքները փոքրիկ ժամին,
Կրավի վրա, կանգնած են ահա...

1893 թ.

Այս տողերը Հովհաննես Թումանյանին են՝ նվիրված հայագի աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Ալվազովսկուն: Զգիտեմ ում մտահոգմամբ, Ալվազովսկու հուշարձանը դրվել է Կամերային տան հարևանությամբ, այգու մեջ և գրեթե չի երևում: Եվ, եթե հարցնենք երևանաբնակներին, թե որտե՞ղ է Ալվազովսկու հուշարձանը, համոզված եղեք, որ 90 %-ից ավելին չգիտեն:

Երևանում կան Մարտիրոս Մարյանի, Արամ Խաչատրյանի, Կոմիտասի, Սպենդիարյանի, Բաբաջանյանի և բազում մեր նշանավոր մեծերի հուշարձաններ, որոնք գտնվում են իրենց ճիշտ տեղը մայրաքաղաքում, բայց ահա Ալվազովսկու՝ ոչ: Բայց սրանով չի ավարտվում Ալվազովսկու հուշարձանի ճակատագիրը: Շատ կարճ ժամանակ անց, այն կանգնեցնելուց հետո, գողացան նրա ձեռքի վրձինը և հանձնարը դարձավ «անձառ»: Այս հանգամանքը ոչ մեկին չանհամբուսացրեց, չվրդովեց, չգայրացրեց... Մեր ժողովուրդը այս երևույթի կողքով անցավ շատ անտարբեր, ինչպես օրինակ, Երվանդ Քոչարի Սասունցի Դավիթ հուշարձանի «Համբերության բառի» գողությանը և նման բազում փաստեր:

Մեր կարծիքով մեծանուն հայի հուշարձանը պետք է փոխադրվի և կանգնեցվի այնպիսի տեղում, որ և՛ մեր ժողովուրդը, և՛ մանավանդ մեր հյուրերը տեսնեն այն: Զե՛ք՝ որ դա նաև հնարավորություն կտա ի լուր բոլորի փաստել, որ հանձնարել ծովանկարիչը մեր հայրենակիցն է, մեր անբաթույց հայրապետություններից մեկը: Ի դեպ, պարտադրյալ քաղաքային իշխանություններ, չնույնացնելով վերադարձնել նրա վրձինը:

Ինչո՞ւ հանկարծ հիշեցի Շիրազին

Այն, ինչին ակամատես եղա, կատարվել է տարիներ առաջ:

Ժամը հինգի սահմաններում անցնում էի մանկական հանրախանութի մոտով, երբ նրան հարևան նշանավոր Գաստրոնոմի դմներից դուրս շարվեցին երկու հոգի: Մեկը գինվորական համագզեստով էր, իսկ մյուսը սևերի գավոր գլխարկով և սպիտակ անձրևանոցով:

Զինվորականի քթից արյուն էր հոսում: Նա ինչ-որ բան էր ասում, որից հասկացվեց, որ Ղարաբաղում կռված տղա է, որ խանութում իրեն խաբել են և ծեծել: Հանկարծ խանութից դուրս բռնեց երեք հաստավիզ (մեր օրերում՝ սափրած գլուխներ) տղամարդ և կատաղաբար հարձակվեցին այս երկուսի վրա: Մի բանի նոր հարվածներ ստանալով (բռնցքի և ոտքերի) գինվորականը փախավ, իսկ տղան «շապկան» (այդպես էին կոչում ծեծողները) հարվածներից տապալվեց գետին: Իսկ գազանաբար, վայրագ ծեծը շարունակվում էր:

Հավաքվածներին միջամտությամբ մի կերպ տղային ազատեցինք մարդկային կերպը կորցրած այդ երեխանից և սկսեցինք ուշքի բերել: Այդ պահին շատ կուզեի, որ սույն վայրագությանը ակամատես լինեիր Մեծն Շիրազը, որ շատ էր սիրում զբոսնել այդ մայրով: Այն Շիրազը, որ տասնյակ տարիներ անկախություն երգեց, անկախություն երազեց և այդպես էլ չտեսավ: Թող մա տեսներ, թե «անկախ» Հայաստանում երկրի հղիացած, հարուստ ու հաստավիզ նոր տները ինչպես են գազանաբար ծեծի ենթարկում իր սիրասուն գավակին: Այո, գոհը Շիրազի գավակ Սիփան Շիրազն էր, որը հանդգնել էր միջամտել և պաշտպանել խաբված գինվորականին: Մի՞թե այսպիսի անկախություն էր երազել մեծ բանաստեղծը, երբ նոր կյանքի տները դարձած երեկվա սինիթները անպատիժ հաշվեհարդար տեսնեն ազնիվ և պարկեշտ մարդկանց հետ: Կամ մի՞թե այն անկախությունն էր երազել, երբ իշխանությունների թողություններով տարբեր բափթիկներ պղծում էին իր ավագ որդու՝ Արա Շիրազի, կերտած նշանավոր հայ Ալեքսանդր Մյասնիկյանի հուշարձանը, որի իրականացրած հայանպաստ բազում-բազում առաքելություններից էր նաև այն, որ այն անհույս տարիներին կրթաթոշակ էր նշանակել Լենինգրադում ուսանող բույր և եղբայր Վիկտոր և Գոհար Համբարձումյաններին:

...Հիշեցի տարիներ առաջ տեղի ունեցած այս տխուր իրադրությունը, և, անկեղծ ասած, փառք տվեցի Աստծուն, որ դեպքը մեր օրերում չէր: Հիմա այդ նորահայտ տները նման պարագաներում ուղղակի գնդակահարում են անցանկալիներին...

Դիմանկարի մանրամասն

Համալսարանում ուսանելու տարիներին զուգահեռ սովորում էի Լ. Տեր-Պետրոսյանի հետ: Ճիշտ է, մենք տարբեր ֆակուլտետներում էինք, բայց ես հաճախ էի լինում բանասիրական ֆակուլտետում և ընդմիջման ժամերին հաճախ էի տեսնում, թե Լևոնը ինչպես է ծխում իր ավանդական «Ալիորան» կամ «Պրիման» դրած երկու մատների արանքում, աչքերը սևեռում հառած մի անորոշ կետի (ասենք միջանցքի պատի անկյունագծին): Նա ծխախոտը ծխում էր մինչև վերջին բուլան, անկախ նրանից, որ ընդմիջումը վաղուց ավարտվել էր: Դասախոսները հաշտվել էին այդ երևույթի հետ:

Անցել էր գրեթե 30 տարի: Լևոնը դարձել էր Հայաստանի 3-րդ հանրապետության նախագահը:

Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում ակադեմիայի 50-ամյա հոբելյանը նշելուց հետո, արտասահմանյան հյուրերի հետ ակադեմիայի աշխատակիցները հրավիրված էին «Արմենիա» ռեստորան՝ տոնական ճաշկերույթի: Բոլորս մտած սեղանների շուրջը, անհամբեր սպասում էինք, որ Լ. Տեր-Պետրոսյանը կեցի անկյունում դրված բազկաթոռից, կբարձրացնի առաջին գավաթը և կասի իր շնորհավորանքի խոսքը: Դրա փոխարեն մա կանգնեց տեղում, ծխախոտը հանեց գրպանից (այս անգամ LM էր՝ ավանդական «Ալիորայի» փոխարեն), սիգարետը դրեց «մուշտուկի» մեջ, վառեց և ինչպես ուսանողական տարիներին՝ աչքերը հառեց մի անորոշ կետի (երևի ռեստորանի առաստաղի անկյունագծին), ծխեց մինչև վերջ, «մուշտուկը» գրպանը դրեց և առանց մոտենալու սեղանին՝ հեռացավ:

...Անցել էր գրեթե 30 տարի, և ոչինչ չէր փոխվել: Այ, մի բան, այնուամենայնիվ փոխվել էր... Ժխախոտի տեսակը: Իսկ որ «բազալիդը մերկ էր»՝ արդեն շատերին էր հայտնի:

1990-ական թթ. սկզբին դեռևս չունենալով ռազմական համագործակցության վերաբերյալ երկկողմ պայմանագրեր՝ դարաբաղյան հակամարտության ընթացքում Թուրքիան զգալի ռազմական աջակցություն ցույց տվեց Ադրբեջանին՝ փորձելով ապահովել այդ երկրի լիակատար հաղթանակը։ Խախտելով միջազգային կոնվենցիաներն ու միջազգային իրավունքի նորմերը Թուրքիան, թեև ոչ անմիջական, սակայն Ադրբեջանին տրամադրված լայնածավալ ռազմական օժանդակությամբ փորձում էր ազդել պատերազմի վերջնական ելքի վրա։ Թուրքական կողմը բավականին մեծ ներդրում է ունեցել ադրբեջանական բանակի կայացման և ամրապնդման գործում, ինչը դրսևորվել է ինչպես զինվորական կադրերի պատրաստման, ուսուցման, այնպես էլ տարբեր տիպի սպառազինության և ռազմական տեխնիկայի ու ֆինանսական օժանդակության տրամադրման ձևով։

Ներկայումս Ադրբեջանի կառավարությունն ակտիվ քայլեր է ձեռնարկում երկրի զինված ուժերի (այսուհետ՝ ՉՈՒ) ոլորտում բարեփոխումների իրականացման ուղղությամբ, ինչը նպաստակ

Թուրքիայի ՉՈՒ գլխավոր շտաբի միջև նյութական օգնության» վերաբերյալ արձանագրությամբ։ 2005թ. Ադրբեջան կատարած այցի ընթացքում Թուրքիայի պաշտպանության նախարար Վեզլի Գյոնուլը հանդիպումներից մեկի ժամանակ նշել է, որ Թուրքիայի կողմից Ադրբեջանին հատկացված ռազմական օգնությունն ընդհանուր առմամբ կազմել է ավելի քան 170 մլն դոլար։

Այն, որ Ադրբեջանը գտնվում է Թուրքիայի աշխարհաքաղաքական գերակայությունների տիրույթում, հետևում է Թուրքիայի զինված ուժերի ցամաքային զորքերի գլխավոր հրամանատար Ի. Բաշդուլիի՝ 2005 թ. զարմանը Ադրբեջան կատարած այցի ժամանակ հնչեցրած այն հայտարարությունից, որ «Ադրբեջանը Թուրքիայի համար եզակի է բոլոր առումներով և եզակի է նաև ռազմական համագործակցությունը»։ Թուրք բարձրաստիճան զինվորականն Ադրբեջանի գործընկերներին վստահեցրել է, որ Թուրքիան ադրբեջանական բանակի վերականգնվող մասն գործում ապահովելու է լուրջ աջակցություն։

Վերջին շրջանում ակտիվացան երկու երկրների միջև բարձ-

Բանակի բարեփոխումների այդ գործընթացն արագացնելու և առավել սահուն տանելու նպատակով նախատեսվում է ադրբեջանական ՉՈՒ և պաշտպանության նախարարության համակարգում, որպես խորհրդակցանք, մի խումբ թուրք բարձրաստիճան զինվորականների նշանակել։ Ադրբեջանական մասնաճյուղի համաձայն՝ Ադրբեջանում պատրաստվում են պաշտպանության նախարարի օգնական նշանակել Թուրքիայի ՉՈՒ մի զենքային, իսկ նրան և նրա հետ Թուրքիայից եկած խմբին լայն իրավասություններ և աշխատելու թույլտվություն կտրվի։ Ենթադրվում է, որ մինչև 2011 թ. այդ աշխատանքներում ծառայություն կկատարեն Թուրքիայի զինված ուժերի և մի խումբ զենքայիններ։ Բացի այդ նախատեսվում է ստեղծել թուրք-ադրբեջանական համատեղ ռազմական հանձնաժողով, որն էլ իրավասություն կունենա ծրագրել և մշակել ադրբեջանական բանակի բարեփոխումների գործընթացը՝ այն համապատասխանեցնելով ՆԱՏՕ-ական չափանիշներին։ Ադրբեջանի զինվորական շրջանակները իրենց թուրք գործընկերներից հիմնականում աջակցություն են սպասում ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան ռազմական ուսուցման, ռազմական գործողություններում տեխնոլոգիաների կիրառման և ռազմական ոլորտում նորամուծությունների ներդրման հարցերում։ Ամենայն հավանականությամբ թուրք զինվորական շրջանակները իրենց ղեկավարությունը կունենան նաև առաջիկայում ընդունվելիք Ադրբեջանի պաշտպանական հայեցակարգի հիմնական ռազմավարական ուղեգծերի սահմանման մեջ։

Ադրբեջանական բանակում թուրք զինվորական խորհրդականների գործունեությունն ինքնին նորություն չէ։ Գեոնա 1992թ. դարաբաղյան պատերազմի ժամանակ տասնյակ թուրք զենքայիններ և բարձրաստիճան զինվորականներ անմիջական մասնակցություն են ունեցել ռազմական գործողությունների մշակման և ադրբեջանցի զինվորների վարժեցման գործում։

Երկկողմ ռազմական հարաբերությունների զարգացման նպատակով նախատեսվում է ակտիվացնել նաև համագործակցությունը երկու երկրների ռազմաարդյունաբերական համալիրների միջև։ Թուրքիայի իշխանություններն ու հատկապես զինվորական շրջանակները քայլեր են ձեռնարկում Ադրբեջանի հետ համատեղ ռազմաարդյունաբերական ոլորտում համագործակցության ծավալման ուղղությամբ։ Բաշդուլի Թուրքիայի դեսպան Թուրան Մորալը 2006թ. հայտարարեց, որ իր երկիրը մասնակցություն է ունենալու Ադրբեջանի ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման գործում՝ նշելով, որ ծրագրվում է ռազմական մեքենաշինության ոլորտում համատեղ նախագծերի մշակում, քանի որ առկա են բոլոր մեխանիզմները Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմական դաշինք ձևավորելու համար։ Թուրք դեսպանը նշել է, որ անհրաժեշտության դեպքում Թուրքիան ըստ արժանվույն կգնահատի ստեղծված իրավիճակն ու անհրաժեշտ քայլեր կձեռնարկի այդ ոլորտում։

Ադրբեջանական մամուլի համաձայն՝ մոտ ժամանակում թուրքական «Aselsan» և «Roketsan» ռազմաարդյունաբերական խոշոր ընկերությունները համագործակցության կոնկրետ ծրագրեր կառաջարկեն Ադրբեջանի նորաստեղծ պաշտպանական արդյունաբերության նախարարությանը։ Այդ ընկերությունները ռազմական տեխնոլոգիաներ վաճառելու փոխարեն Ադրբեջանին համատեղ արտադրության առաջարկներ կներկայացնեն։

Այսպիսով, Թուրքիան փորձում է ռազմական համագործակցության միջոցով լուրջ դերակատարություն ստանձնել ադրբեջանական ուժային համակարգում՝ ամրապնդելով իր ռազմաքաղաքական ազդեցության լծակներն ինչպես այդ երկրում, այնպես էլ տարածաշրջանում։ Ուստի թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության զարգացումն ու ռազմական դաշինքի ձևավորումը, հատկապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության շարժառնակներում լինելու պայմաններում, լուրջ խնդիր է ներկայացնում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգության համար։

ԹՈՒՐԷ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒՇԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

է հետապնդում դրանք ընդհանուր առմամբ համապատասխանեցնել ՆԱՏՕ-ում առկա չափանիշներին։ Ադրբեջանի ռազմական բարեփոխումներն իրականացվում են Հյուսիսատլանտյան դաշինքի Անհատական գործընկերության գործողությունների ծրագրին (այսուհետ՝ ԱԳԳԵ) Ադրբեջանի մասնակցության շրջանակներում։ Առաջիկայում նախատեսվում է ստորագրել 2007–2009թթ. գործողության մեջ մտնող ԱԳԳԵ երկրորդ ծրագիրը։ Ադրբեջանական բանակի բարեփոխումների իրականացման գործում լուրջ դերակատարություն է փորձում ապահովել Թուրքիան։ Ադրբեջանական ՉՈՒ բարեփոխումների գործընթացում թուրքական զինվորական շրջանակները պետք է անմիջական դերակատարություն ունենան ադրբեջանցի զինվորների կրթության, սպայական կազմի վերապատրաստման և բանակային կառուցվածքը ՆԱՏՕ-ի չափանիշներին վերափոխելու խնդրում։ Թուրքիայի համար ադրբեջանական բանակի բարեփոխումների ծրագրերն առաջին հերթին միտված են ապահովելու իր ռազմավարական շահերը՝ ձգտելով «Լեռնային երկրի» ռազմական համակարգում մեծացնել իր անմիջական ազդեցությունը։

Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը բուռն կերպով սկսեց զարգանալ 90-ական թվականների կեսերից։ Երկու երկրների միջև ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության խնդիրները կարգավորվում են հիմնականում 1996 թ. հուլիսի 10-ին Անկարայում ստորագրված «Ռազմական կրթության, տեխնիկական և զինական համագործակցության» մասին պայմանագրով, 2001թ. մարտին ստորագրված «Ադրբեջանի և Թուրքիայի կառավարությունների միջև փոխադարձ ռազմական օգնության մասին» համաձայնագրով և «Ադրբեջանի պաշտպանության նախարարության և

րաստիճան զինվորականների փոխայցելություններն ու համատեղ միջոցառումները։ Նկատվում է ռազմական ոլորտում թուրք-ադրբեջանական համագործակցության աշխուժացում, ինչը հիմնականում ուղղված է ԱԳԳԵ շրջանակներում ադրբեջանական բանակի բարեփոխումներում Թուրքիայի կողմից աջակցության տրամադրմանը։ Ակտիվացան թուրք բարձրաստիճան զինվորականների այցելություններն Ադրբեջան տեղում գնահատելու և ընթացիկ բարեփոխումների հիմնական ուղեգծերն ու ոլորտները։ 2007թ. մարտի սկզբին Ադրբեջան այցելած Թուրքիայի ՉՈՒ գլխավոր շտաբի երկրորդ պետ Էրգին Մալգուլը ադրբեջանցի գործընկերների հետ ըննարկել է երկու երկրների միջև ռազմական համագործակցության խնդիրներն ու անելիքները հավաստիացնելով, որ Թուրքիան իր ակտիվ ներդրումը կապահովի ադրբեջանական բանակի վերականգնվող մասն գործում։ Թուրք բարձրաստիճան զինվորականը երկու երկրների ռազմական համագործակցության մեջ առանցքային է համարել հատկապես զինվորական կադրերի վերապատրաստման և կրթության հարցերը։ Այցի շրջանակներում Ադրբեջանի պաշտպանության նախարարության և Թուրքիայի ՉՈՒ գլխավոր շտաբի միջև համագործակցության զարգացման վերաբերյալ փաստաթուղթ ստորագրվեց։ Նույն ժամանակահատվածում Ադրբեջան այցելած Թուրքիայի ՉՈՒ ցամաքային զորքերի հրամանատար Իլթեր Բաշդուլը տեղում ծանոթանալով ադրբեջանական բանակի զարգացման և բարեփոխումների ընթացքին, ԱԳԳԵ շրջանակներում ՆԱՏՕ-Ադրբեջան համագործակցության խնդիրներին վերադառնալով հաստատել է Թուրքիայի կողմից Ադրբեջանի ՉՈՒ բարեփոխումների գործում ցուցադրվելիք աջակցության շարունակականությունը։

Անգնահատելի է ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանի ներդրումը Վանի թագավորության ռազմաքաղաքական պատմության, տեղանունների, լեզվաբանության, ինչպես նաև դիցարանի ողորմմասիության բնագավառում, ընդարձակ են նրա հետազոտության սահմանները։ Ժամանակի հրամայականն է նորովի վերանայել և արժեքավորել ականավոր արևելագետի ներդրումը նաև ուրարտական դիցարանի բնագավառում, քանզի անցել են բազում տասնամյակներ, և նրա կողմից կատարված շատ վերլուծություններ կարիք ունեն նոր լրացումներին։ Ներկա հոգվածում փորձ է արվում արժեքավորել Ղափանցյանի ուսումնասիրությունները, առաջարկված հիմնավորումները՝ համադրելով դրանք հետազայում մասնագիտական գրականության մեջ արտահայտված կարծիքների հետ, մատնանշել դրանց տեղն ու դերը գիտության առաջընթացի համար։

Վանի թագավորության դիցարանի ուսումնասիրության բնագավառում առանձնահատուկ աղբյուր է Իշպուհին և Մեմուա թագավորների համատեղ գահակալության տարիներին (մ.թ.ա. IX դարի վերջին քառորդ) փորագրված Միերի դռան պաշտամունքային արձանագրությունը։

Յիշյալ արձանագրությանը, բնականաբար, իր աշխատություններում անդրադարձել է նաև Գր. Ղափանցյանը։ Նա առաջինն էր հայ իրականության մեջ, որ ուրարտական պանթեոնի դիցանունները բաժանեց վեց խմբի, որոնցից առաջին երեքը՝ արական, մյուս երեքը՝ իգական։ Առաջին խմբում նա հաշվել է երեք, երկրորդում՝ քսանվեց, երրորդում՝ քսանհինգ, չորրորդում՝ չորս, հինգերորդում՝ երկու, վեցերորդում՝ յոթ աստվածություններ։

Ստորև բերում ենք Միերի դռան ուրարտական դիցարանի աստվածությունների անուններն ըստ Գր. Ղափանցյանի բաժանման։

Աստվածներ

I խումբ՝ Խալդի, Թեյշեբա, Շիվինի։

II խումբ՝ Խուտուխին, Տարանի, Ուա, Նալաինի, Արսի-

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՆԱ (ՄԻ) ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳՐ. ՂԱՓԱՆՅԱՆԸ ԵՎ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԻՃԱՐԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

մեկա։
III խումբ՝ Անապա, Դիդուաինի, Շելարդի, Աթինի, Կուեռա, «Աստված, որը հոգիներ է տեղափոխում», Ալափուշինի, Էրինա, Շինիի, Ունինա, Այրաինի, Ջուգոււարու, Խարա, Արածա, Ջիուկունի, Ուրա, Արծիբեդի, Անի, Շուբա, Էլիավա, Թալափուրա, Կիլբանի։

Դիցուհիներ

I խումբ՝ Վարուբ(ա)ինի, Բաբա, Տուշպուեա, Աուի։

II խումբ՝ Սարդի, Ծինույարդ։

III խումբ՝ Իշխարի, Բարծիա, Սիլիա, Արուա, Ադիյա, Ույա, Արդի։

Այժմ անդրադառնանք ուրարտական պանթեոնի այն աստվածներին և դիցուհիներին, որոնք տեղ են գտել Գր. Ղափանցյանի տեսադաշտում։

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ «աստված» և «աստվածուհի» բառերի բացահայտմանը և նորովի մեկնաբանմանը։ Միերի դռան դիցանունները դիցուհիներին գոհաբերվող գոհաբերությունների թվարկումը ավարտվում է «i-nu-a-na-u-e XVII UDU արտահայտությամբ։ Մասնագիտական գրականության մեջ «i-nu-a-na-u-e» համարել են թե հատուկ և թե հասարակ

անուն։ Նրա նշանակության բացահայտումը կատարել է Ն. Յարթունյանը՝ այն մեկնաբանելով որպես հասարակ անուն։ «i-nu-a-na-u-e» հանդիսանում է inua հասարակ անվան հոգնակի տրականը (հոգնակի ուղղականն է inuanili-n), ինչը նույնական է խուռ. eni «աստված» բառի հետ։ Յետևաբար, inua բառի տակ ենթադրվում է «դիցուհի», իսկ ina(ini) ուրարտ. բառի տակ՝ «աստված, աստվածություն» բառերը։

Ըստ Գր. Ղափանցյանի՝ Խալդին՝ դիցարանի գերագույն աստվածը, սկզբում եղել է Մուսասիրի (Արդինի) քաղաքի տեղական աստվածը։ Սակայն հետագայում՝ պետության կազմավորմանը զուգահեռ, նա ստացել է համաուրարտական նշանակություն, ուստի «խալդյան» լինելը՝ Խալդին պաշտելը, համագոր էր ուրարտական լոյալ քաղաքացի լինելուն։ Խալդին կնոջ անունը հայտնի է Վարուբանի (ուրարտական աղբյուրներում) և Բագբարու/Բագմաշուու ձևերով։ Գր. Ղափանցյանը գերադասում է ասորեստանյան սեպագիր աղբյուրներում հիշատակվող Բագբարու ձևը և նրան վերագրում իրանական ծագում՝ իր հիմքում ունենալով Bag-bar, և ոչ թե՝ Bag-mš ձևը։ Ավելի վաղ Գր. >7

(Սկիզբը՝ N 7 (194))

Դասերից հետո հաճախ տուն էինք վերադառնում մեծ խմբով: Դաճապարհին աստիճանաբար նստանում էր այդ խումբը, և երբ մենք մնում էինք Տիգրանի հետ, գրուցում էինք մեր կարդացած գրքերի մասին: Աշխատում էինք հասկանալ, թե ինչն էր դպրոցում չեն անցնում Բաֆֆի, Չարենց, Բակունց, ինչո՞ւ են արգելված այդ հեղինակները: Նրանց գրքերը մենք ճարում էինք դժվարությամբ, մեր ընկերների ծնողների գրադարաններից կամ հանրային գրադարանից: Թրիլիսիի հանրային գրադարանի «անօրինական» անդամ էինք դարձել: Դա մեզ հաջողվում էր, քանզի գրադարանի աշխատողները չէին կարդում հայերեն և տալիս էին այն ամենը, ինչ մենք պատվիրում էինք:

Տիգրանը միշտ զարմանում էր հանձնարարված աշխատանքների ծավալի վրա: Ժպտալով ասում էր. «Կարգին պարապ մարդիկ եք»: Բայց դասարանի ստուգողականը նա գրում էր շատ գրագետ և հակիրճ, ստանա-

զգացմունքներով մարդուն:

Դպրոցում մաթեմատիկա, երկրաչափություն, հանրահաշիվ, եռանկյունաչափություն դասավանդում էր Սարիբեկյանը, որը մաթեմատիկայի առաջին հայերեն դասագրքի հեղինակն էր: Տիգրանը այդ ժամերին ուրիշ ոչ մի բանով չէր զբաղվում, այսինքն իր ծոցատետրում չէր շարունակում հետաձգված պարտիայի ուսումնասիրությունը, ինչպես հաճախ նա անում էր անատոմիայի, ֆրանսերենի, ռուսերենի և վրացերենի դասերին:

Նա շատ ուշադիր էր հատկապես եռանկյունաչափական խնդիրները լուծելիս և համարյա միշտ գտնում էր լուծման այլ ճանապարհներ: Դասի ընթացքում Սարիբեկյանը հնարավորություն էր տալիս յուրաքանչյուրիս մեր առաջարկությունները ներկայացնել հենց գրատախտակի վրա, լրացուցիչ ճշգրտումներ մտցնելով լուծման մեջ, կամ ժխտելով այն, սխալ առաջարկության դեպքում: Տիգրանը համարյա չէր սխալվում, եթե նա գտնում էր լուծման այլ ճանապարհ, ապա դա լինում էր անսխալ: Սակայն ինձ թվում էր, որ նա միշտ չէ, որ ասում էր այդ

փաստորեն թևակոխել էին երիտասարդական շրջանը: Նա 18-20 տարեկաններին հասակակիցն էր... Տիգրանի ծնողները Սպայի տանը տեխնիկական աշխատողներ էին: Տիգրանը դասերից և շախմատից բացի, օգնում էր նրանց: Նա երբեք չէր պատմում իր ընտանիքի մասին, երբեք չէր բողոքում իր առողջական վիճակից: Մենք պարզապես տեսնում էինք, որ նա կարիքի մեջ է, չնայած շատ շատերս էինք դժվար վիճակում, բայց մենք բոլորս ցավում էինք, որ նա ավելի լավ պայմաններ չունի: Մենք հարգում էինք այդ անվիճելիորեն բոլորից զարգացած, դպրոցում և դպրոցից դուրս իր ընկերների շրջապատում սովորական դպրոցականին վայել պահվածքով համեստ ընկերոջը:

Հաճախ մեզ ցնցում էր նրա զսպվածության աստիճանը: Հիշում են, վեցերորդ դասարանում Տիգրանը արդեն մասնակցում էր առաջին կարգային վարկանիշի համար կազմակերպված Վրաստանի շախմատի առաջնության մրցույթին: Մենք՝ դպրոցի տղաներս, հետևում էինք այդ խաղերին: Տիգրանը փայլուն հաղթանակներ էր տանում, սակայն ինչ-որ մի փուլում նա սկսեց տարօրինակ պահել իրեն. չկար Տիգրանի խաղային փայլը, անխոս էր, լուռ, չէր հետևում մյուս տախտակների վրա ընթացող քայլերին: Մենք չէինք հասկանում ինչ է կատարվում: Հանկարծ նա անսպասելի պարտություն կրեց: Հետո իմացանք, որ ծանր հիվանդացել էր հայրը: Եվ այդ պայմաններում էլ շարունակում էր խաղալ ու պայքարել, զուգահեռաբար կատարելով նաև հոր աշխատանքը:

Տասնհինգը չբոլորած պատանին գերմարդկային ճիգերով, շախմատի նկատմամբ սիրով ու ձգտումով հաղթահարում էր բախտի ծանր հարվածները, շարունակում էր խաղալ և հաղթանակել: Նա առաջատարների շարքում էր: Մենք անհամբեր հետևում էինք այդ մրցույթին: Սակայն առաջին պարտությունից մի քանի օր անց, խաղի ժամանակ, մեկը մոտենալով նրան ինչ-որ բան շնջաց: Տիգրանը ցնցվեց, սխալ քայլ կատարեց, անմիջապես կանգնեցրեց ժամացույցը և դուրս թռավ դահլիճից: Հոր մահվան բոթն էին գուժել:

...Երկու օրվա բացակայությունից հետո Տիգրանը վերադարձավ դահլիճ, նստեց իրեն հատկացված տեղը և սառնասրտորեն շարունակեց խաղալ, շարունակեց վայելում, հավաքեց անհրաժեշտ բանակի միավորներ և ստացավ առաջին կարգայինի վարկանիշը: Դա ամենակարևոր քայլն էր մեծ շախմատի շեմին: Մնում էր միայն բացել այդ դուռը: Հետո նա մեզ ասաց, որ հոր հիվանդության ժամանակ, և հատկապես մահվանից հետո անընդհատ ինքն իրեն հարցնում էր՝ շարունակե՞լ խաղալ այդ մրցույթում, թե՞ ոչ: Դարձյալ հզոր բանականություն ու կամքի ուժը հաղթել են, և նա որոշել էր շարունակել...

Մեզ համար դա մեծ տոն էր: Սակայն Տիգրանը մնաց իր ծեր հորաքրոջ՝ «Բաբայի» հետ մենակ, աշխատանքի, ուսման և շախմատային հոգսերի ծանր բեռի տակ: Բայց այդ մրցույթից հետո Տիգրանը, վերջապես, ճանաչվեց որպես Վրաստանի ուժեղագույն շախմատիստներից մեկը, ինչը և հիմք ծառայեց նրան ներկայացնելու Լենինգրադում կայանալիք ՍՍՀՄ պատանեկական մրցույթին: Մի քանի ամիս անց Տիգրանը մասնակցեց այդ մրցույթին և գրավեց առաջինից երրորդ տեղը: Նա վերադարձավ դպրոց ինչպես իսկական հերոս: Առջևում նորից Վրաստանի չեմպիոնատն էր: Մենք բոլորս էինք Տիգրանի հետ պատրաստվում այդ չեմպիոնատին: Տիգրանը՝ պարապելով, մենք՝ հոգեբանորեն: Մեզ թվում էր, որ Տիգրանին պարզապես ինչ-որ ուժեր չեն թողնում Վրաստանի չեմպիոն դառնալ:

Չեմպիոնատը անցավ Տիգրանի համար փայլուն, նա իրեն շատ վստահ էր գգում, մենք բոլորս ամենակտիվ ձևով հետևում էինք խաղին՝ հաճախ քայլը կատարելուց հետո նա հեռանում էր բեմից: «Հակառակորդի» քայլից հետո նա երկար ժամանակ չէր երևում: Մենք դուրս էինք վազում դահլիճից, սկսում էինք վնասել Տիգրանին, վերջապես գտնում էինք մի անկյունում կանգնած՝ գրուցելիս: Երբ մենք անհամբար հայտնում էինք, թե մրցակիցը քայլը կատարել է, Տիգրանը հանգիստ և սառնասրտորեն ասում էր.

- Ոչինչ, գիտեմ, թե ինչ քայլ արած կլինի:

Եվ մտնում էր բեմ:

Մի քանի վայրկյան նայելուց հետո կատարում էր իր քայլը, գրանցում, և նորից դուրս գալիս: Դա կրկնվում էր համարյա միշտ, բացառությամբ մի քանի բարձր կարգի շախմատիստների հետ խաղալիս, որոնք մասնակցում էին այդ մրցույթին: Նման դեպքում բեմի վրա մենք տեսնում էինք իսկական մարանջող Տիգրանին: Մրցույթի վերջին փուլում նա համարյա չէր հեռանում բեմից, հետևում էր մյուսների խաղերին: Տիգրանը հաղթեց այդ մրցույթում և ճանաչվեց 1945 թվականի Վրաստանի չեմպիոն: Մեր կարծիքը՝ թե նրան կամ լրիվ չեն գնահատում, կամ չեն հասկանում՝ պատահական չէր:

Տիգրան ՊԵՏՐՈՍՅԱՆ. ԻՄՈՑԱԿԱՆ ՏՄԻԻՒՄԷ



լով բարձր գնահատական: Մենք արդեն գիտեինք, որ նա իրոք այդքան շատ գրելու ժամանակ չունի, չնայած, որ նա սիրում էր կարդալ: Նրա ընկալման և յուրացման բնածին տաղանդը և կենտրոնացված ունակությունը նրան հնարավորություն էին տալիս շատ անգամ ավելի կարճ ժամանակահատվածում յուրացնել հսկայական ծավալի գրականությունը: Իհարկե, այդ հարցում մեծ էր նաև մեր հայոց լեզվի ուսուցչի՝ Դազարյանի դերը:

Տիգրանի ռուսերենը մեզ զարմացնում էր, նա փայլուն ռուսերեն էր խոսում և շատ գրագետ, համարյա անսխալ գրում: Նրա հետ գրուցելիս համոզվում էինք, որ նա շատ է կարդում: Ուղղակի զարմանում էի, թե երբ է հասցնում ուսումնասիրել շախմատային գրականությունը: Նա փայլուն գիտեր այդ բնագավառը, որից բավականին հեռու էինք մենք, նույնիսկ այն ժամանակ, երբ արդեն լրջորեն զբաղվում էինք շախմատի խաղով: Երբ տեսնում էր, որ մենք հիմնականում առաջնորդվում ենք «Մայգելիտով», նա նորից իրեն հատուկ հույսերով ասում էր. «Դե, դա անհրաժեշտ գրականություն է շախմատ խաղալու համար, բայց եթե ուզում եք շախմատիստ դառնալ, կարդացե՛ք Նիմցովիչի գիրքը, այնտեղ կա շախմատային աշխարհայացք նաև»: Ուրեմն, մտածում էի ես, նա Նիմցովիչը ուսումնասիրում է և ոչ թե կարդում, ուրեմն նրա ռուսերենի իմացությունը ոչ թե միայն «Սպայի տան» միջավայրի հետ անընդհատ շփումից է, այլ նաև շախմատային գրականության ուսումնասիրությունից: Եվ ես չէի սխալվում: Շախմատը նրան առաջ էր մղել մի քանի տարով: Կյանքի դժվարություններն ու փորձությունները, ինչպես ընդհանուր պատերազմական շրջանի ծանր պայմանները, այնպես էլ նրա անձնական, յուրահատուկ վիճակը, միախառնված նրա աննկուն և անկոտրում կամքին ու ձգտմանը՝ հասնել շախմատային խաղի բարձունքներին, նրան դարձրել էին ժամանակից ավելի հասուն և ուժեղ անձնավորություն իր շրջապատում: Մյուս կողմից՝ նրա բնականից պարզ և ազնիվ բնավորությունը և երևի՜ նորից անձնական դառնությունները, նրան դարձնում էին հասարակ և լավ ընկեր ու հասակակից իր դպրոցական և առօրյա կյանքում: Երևի թե նա այդ տարբերությունը չէր գգում, կամ հատուկ իր բնավորությանը՝ չէր ընդգծում, և ողջ իր հետագա կյանքում, հասնելով, իրոք, շախմատային խաղի Օլիմպիսին, նա մնաց պարզ և անմիջական իր շրջապատում: Հետագա տարիներին, ամեն մի հանդիպումը նրա հետ հիշեցնում էր այն վաղ շրջանի դպրոցական և ուսանողական Տիգրանին, իր և՛ լուրջ, և՛ կիսահումորով բնավորությամբ, և պարզ ու բարի-ընկերական

մասին բարձրաձայն և չէր ներկայացնում իր նոր լուծման եղանակը, թեկուզ հանդգնած լինելով, որ ինքը ճիշտ և գուցե ավելի կարճ լուծման ճանապարհ է գտել:

Դասերից հետո, երբ առիթ էր լինում գրուցել, նա մեզ թեթևակի ասում էր այդ մասին: Բայց չէր պարծենում: Նրա բնավորության մեջ բոլորովին չկար այդ հատկությունը, չէր սիրում վիճել, կովել, նեղանալ, հաճույքով գրուցում էր ցանկացած լուրջ թեմաների շուրջը, պատմել կամ բացատրել այն՝ ինչ ինքը գիտեր: Ոչ մի անգամ չէր բողոքում կամ դժգոհում իր վիճակից, պայմաններից կամ ընկերներից, մենք չէինք տեսնում այն բոլոր դժվարությունները, որը, հավանական է, նա հաղթահարում էր կյանքի ճանապարհին, հատկապես, շախմատի ասպարեզում: Նա հաճախակի էր արտահայտում իր գոհունակությունը Էրրալիներից, սակայն մեզ միշտ զարմացնում էր այն փաստը, թե ինչու նա բարձր տեղ չի գրավում Վրաստանի չեմպիոնատում: Ավելի ուշ, երբ մենք արդեն լուրջ փորձեր էինք անում շախմատի ասպարեզում, մասնակցում որոշ վարկանիշային մրցումների և հանդիպում էինք բազմաթիվ ոչ օբյեկտիվ և արհեստական խոչընդոտների, հակակցանք, թե ինչ ճանապարհ է անցել Տիգրանը՝ այդ անօգնական հայ պատանին, և ի՞նչ գերմարդկային սեր և կամք է ցուցաբերել ապացուցելու ու առաջ տանելու իր շախմատային կարողությունները:

Նրա վարպետ Էրրալիներն, իհարկե, կարևոր դեր է խաղացել Տիգրանի՝ որպես շախմատիստի, ձևավորման պրոցեսում: Սակայն, ինչպես մենք էինք գգում կամ երբեմն տեսնում, Տիգրանին չէր հատկացվում նույն ուշադրությունը, ինչ մյուսներին:

Երբ մենք դժգոհում էինք մրցույթների արդյունքներից, նա իրեն հատուկ հույսերով ասում էր. «Ի՞նչ եք ուզում, իրենք ձեզ լավություն են անում, իսկ դուք չեք հասկանում: Եթե դժվար պայմաններում չսովորեք առաջ գնալ, ոչ մի կարգ չեք ունենա շախմատում»: Դա ասում էր հումորով, սակայն նրա հումորն էլ շաղախված էր կյանքի փիլիսոփայությամբ, և՛ հատկապես իր անձնական կյանքի փիլիսոփայությամբ:

Եվ, այնուամենայնիվ, մենք ապրում էինք դպրոցական բոլոր կյանքով: Տարվում էինք գրականությամբ, պատմությամբ, փիլիսոփայությամբ, արվեստով, շախմատով, սպորտի տարբեր ձևերով: Հաճախ կարողանում էինք ուտել օրը միայն մեկ անգամ: Այս բոլորը մեր հասակակիցների համար սովորական առօրյա էր: Նման մթնոլորտում առանձնանում էին նաև տաղանդալից պատանիներ: Պատերազմը մեզ բոլորիս ստիպել էր վերջակետել մեր մանկությունը և միանգամից մտնել պատանեկության շրջանը, սակայն Տիգրանի նման եզակիները

Հովհաննես ՄՈՒՐԱԴՅԱՆ
Տեխն. գիտությունների քննաժողով
(Դավաթ-Պլան, ԱՄՆ)

Խիզախ գինվորի մասին

Վերադարձի հուշ

1944 թվականի աշնանը Կարմիր բանակի մարտիկները համառ մարտերով առաջ էին շարժվում: Թշնամուն հանգիստ չտալով, նրանք շտապում էին Լիտվայից անցնել Արևելյան Պրուսիա:

Երեկո էր: Ձիվորները խրամատավորված էին Լեման գետի ափին՝ և շտապ-շտապ ռազմամթերք էին տեղափոխում: Նրանց մեջ էր նաև տասնութամյա Նաճար՝ ականաձիգ Սարգիս Եղիզարյանը:

Նա իր դիպուկ ականանետային կրակով ոչնչացնում էր հակառակորդի կրակակետերը:

Մութ գիշեր էր: Բոլորս կամաց-կամաց խրամատավորվում էինք: Հանկարծ մեզանից ոչ հեռու մի սուր և աղետալու ծայր լսեցինք:

Օֆ, օֆ, օգնեցե՛ք:

Կարծես Եղիզարյանն է, բացականչեց ավագ Մացոյանը և արագ-արագ մոտեցավ նրան:

Եղիզարյան, քեզ զսպիր, մի բղավիր, թշնամին տեղներս կիմանա:

Ես ուզում եմ լռել, բայց... շննջաց անվեներ մարտիկը:

Գիշերային լռության մեջ ամեն ինչ լռեց: Եղիզարյանին շտապ օգնություն ցույց տվեցինք:

Լուսաբացը մոտենում էր. անհրաժեշտ էր գիշերվա ընթացքում կրակակետեր պատրաստել, որովհետև լույս ժամանակ անհնար էր խրամատավորվել: Այդ պատճառով էլ Եղիզարյանին թողեցինք գետնափորում և մենք անցանք մեր պարտականությունների կատարմանը: Պատրաստ սպասում էինք հարձակման հրամանի, երբ մեզ մոտեցավ ավագ Մացոյանը և ասաց.

Տղաներ, ձեզանից ո՞վ կարող է տեսնել Սարգսին, Ես, պատասխանեց համառ Բայաթյանը և խկույն խրամատից դուրս նետվեց ու սողալով շարժվեց դեպի Եղիզարյանը:

Չանցած տաս րոպե երբուն քայլերով մեզ մոտեցավ Բայաթյանը և արտասվելով ասաց.

Սգացե՛ք տղաներ, Սարգիսը իր վերջին հրաժեշտը տվեց կյանքին:

Այդ վշտալի լուրը լսելով բոլորս ոտքի կանգնեցինք և գլուխներս խոնարհեցինք մեր մարտական ընկերոջ հիշատակի առջև:

Երբ լույսը բացվեց, Եղիզարյանի դին հանձնեցինք հողին: Նրա գերեզմանի վրա հրաժեշտի խոսք ասացին մայրը Վորոնովը և գնդապետ Ռուդենկոն:

Արամ ԵՂԻԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հայրենական պատերազմի, աշխարհաքաղաքական պատերազմի և Երկրորդ համաշխարհային պատերազմի խորհրդի նախագահի պետական

Ֆլորիդան այսօր ապրող հայերի ֆանա-կով թվով 6-րդն է ամերիկյան մահանգների մեջ: Առաջին երեք տեղերը գրավում են Կալիֆոռնիայի, Նյու-Յորքի և Մասաչուսեթսի մահանգները: 4-րդ և 5-րդ տեղերը բաժին է ընկել Նյու-Ջերսի և Միչիգան մահանգներին: Ոչ դաստնական ընկերություն Ֆլորիդայում բնակվում է մոտ 25.000 հայ: Բացառված չէ սակայն, որ դրանց իրական ֆանակը ավելի մեծ է:

Պիոներները

Ամերիկայի Միացյալ Նահանգներ հայերի ներգաղթի պիոներները դարձան մի խումբ երիտասարդներ, որոնք 1834 թվականին դարձան ավարտելով եկան նոր աշխարհ՝ այսօր ուսումնառությունը շարունակելու:

Ամերիկա ներգաղթողների թիվը գնալով ստվարացավ, դրան նպաստում էր Օսմանյան Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը 1880-1890 թվականների ընթացքում: Մեծ եղեռնից հետո հազար-հազարավոր հայեր ապաստան գտան Միացյալ Նահանգներում: Ավելի ուշ, 1950-1980 թվականներին դեպի Նահանգներ շարժվեց գաղթականների մոտ ավելի Լիբանանից, Սիրիայից, Իրաքից, Իրանից: Պատճառը Մերձավոր Արևելքում քաղաքական անկայուն վիճակն էր, այստեղ-այնտեղ ծայր առնող պատերազմներն ու բախումները:

Չմոռանալ, որ հիշյալ տարիներին բազմաթիվ հայեր հեռանում էին նաև Խորհրդային Հա-

ՎԵՐԵԼԵ ՖԼՈՐԻԴԱՅՈՒՄ

յաստանից՝ բարձր և երջանիկ կյանք ակնկալելով Ամերիկայում: Դժբախտաբար, արտագաղթը Հայաստանից դեպի Ամերիկա ավելի խոշոր չափեր ընդունեց անկախացումից հետո և շարունակվում է ու շարունակվում:

Ֆլորիդայի մահանգում հայերն առաջին անգամ ոտք դրեցին 1910 թվականին (հարավային Ֆլորիդա): Չմայած ոչ մեծ թվին, արդեն 1930 թվականին Մայամի-Բիչում (ներկայումս ռուսական սփյուռքի կենտրոնը) հիմնադրվեց հայ գաղթաբնակ: Այդ ժամանակներից հայերը Ֆլորիդայում շատ հաջողությունների են հասել հասարակական կյանքի, տնտեսության բոլոր բնագավառներում: Մոտ ժամանակներս այստեղ գործող 4 հայկական եկեղեցիների կապելանան և երկուսը: Շատ կարևոր հանգամանք, բանի որ ինչպես Սփյուռքի ամեն հայ եկեղեցի, բացի իր հիմնական առաքելությունից մշտական հավաքատեղի և համախմբվելու վայր է շրջակայքում բնակվող հայերի համար: Այստեղ են բնակվում, կարևոր վճիռներ ընդունվում ենրազգային, հայրենասիր, հայապահպանության և պահպանող կարևոր խնդիրների վերաբերյալ:

Մայամիի սր. Մարիամ եկեղեցին մշտական այցելողների թիվը անընդհատ աճում է: Եկեղեցու շուր-

ջը հավաքված է հայրենասերների մի խումբ, որոնց անդամները ամբողջ հոգով ծառայում են հայ եկեղեցուն և հայապահպանության սուրբ և նվիրական գործին:


Ֆլորիդայում ապրող շատ-շատ հայերը երբեք չեն եղել իրենց պատմական հայրենիքում՝ Հայաստանում, սակայն դա չի խանգարում, որ նրանց մեծ մասը սովորի մայրենի լեզուն և խոսի հայերեն: Ուսուցման առաքելությունը հաջողությամբ է իրականացնում սր. Մարիամ եկեղեցու կիրակնօրյա դպրոցը: Գործում է եկեղեցու հիմնադրման իսկ օրից: Ինչպես տեղեկացնում է վանահայր Տեր Վարդանը, եկեղեցին հայերենի քաջահմուտ ուսուցիչ-կամավորների մեծ կարիք ունի: Բացի մայրենիի ուսուցումից, երեխաները, դեռահասները, պատանիներն ու երիտասարդները եկեղեցում ստանում են նաև հոգևոր դաստիարակություն, մարզական պատրաստություն, մշակութային կրթություն: Քիչ չեն դեպքերը, երբ խառը ամուսնությունների ժամանակ ամերիկացի աղջիկները կամ երիտասարդները կամովին հրաժարվում են կաթոլիկությունից և դառնում հայ առաքելական եկեղեցու հավատացյալ:

Լիլիա ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ֆլորիդա, ԱՄՆ

ԵՐԿԻՆՔՆ
ԿԱՆՉՈՒՄ

Է

ՈՒՂԵՐԹՈՒՄ
Է A-380-Ը



ՎԱՐԴԱՆ ԱՌՈՅԱՆԻ «Գարեգին Նժդեհի ուսմունքը և դրա արդիականությունը» աշխատության վերաբերյալ

Նախորդ դարասկզբից մինչ այսօր հայերն անցնում են ծանր դժվարությունների ու փորձությունների միջով: Առաջին համաշխարհային պատերազմ տեսած, ցեղասպանություն վերապրած, Երկրորդ համաշխարհային և դարաբաղյալ պատերազմների միջով անցած ազգը գոյատևում և արարում է շնորհիվ անկոտրում կամքի և տոկունության: Իսկ այդ անկոտրում կամքն ու տոկունությունը մարմնավորված են ազգի գավակների ու որդիների սրտերում և հոգիներում:

Հայագի աշխարհի արժանավոր գավակներից մեկն էլ Գարեգին Նժդեհն է, ով իր հայապահպան և հայապատկան անգնախառն հզոր գործունեությամբ աշխարհում XX դարում Լեռնահայաստանի պահպանման և Հայաստանը մահացու անդամահատումից փրկելու գործում:

Գ. Նժդեհ գործավարի, մեծ քաղաքական, պետական գործչի և վերջապես որպես մարդ անհատի մտածելակերպն ու վարքագիծը, նրա անցած ճանապարհը, գործած սխալները, բարոգած գաղափարները պետք է վառ օրինակ հանդիսանան հայոց մատաղ սերնդի հայեցի, ճիշտ, հայրենասիրական ոգով դաստիարակման գործում: Մակայն, մերօրյա հասարակությունը դեռևս հավիտ պատշաճի վերաբերմունք չի ցուցաբերում ոչ միայն Նժդեհի, այլ նաև ազգի մյուս մեծերի, նրանց գործերի, հոգևոր առումով եզակի՝ արժեքների հանդեպ:

Այս առումով, կարևոր է մեծ արժեք է իրենից ներկայացնում Վարդան Արդյանի հեղինակած «Գարեգին Նժդեհի ուսմունքը և դրա արդիականությունը» (Եր. «Էկոնոմիկա հանդես», 2007, 104 էջ) վերնագրով աշխատությունը:

Հեղինակը գիրքը նվիրել է Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ Վարդան Վանչանյանին՝ Հանրապետական կուսակցության նախագահ Անդրանիկ Մարգարյանի վառ հիշատակին: Մարդ, ով մեծ ալանդ ներդրեց արդի հասարակությունում Գարեգին Նժդեհի, նրա ուսմունքի, գործունեության ճանաչողության, լուսաբանման և մատչելի դարձնելու գործում:

Գրքում անդրադարձ է կատարվում անցած դարի 30-ական թվականներին Նժդեհի ծավալված ազգամիջոց գործունեությանը, նրա հիմնադ-



րած Ցեղակրոն և Տարրական շարժումների գաղափարախոսությունների ուսումնասիրմանը: Հեղինակը փորձել է ցույց տալ ներկայումս այդ գաղափարախոսությունների բնորոշ արդիականությունն ու այն կյանքի կոչելու կարևորությունը: Աշխատության առաջին մասը ամբողջությամբ նվիրված է Ցեղակրոն շարժմանը և դրա գաղափարախոսությանը՝ Ցեղակրոնությանը: Այդ շարժման սկզբնավորման պատճառներին, գաղափարախոսությանը, որը կարճ ժամանակահատվածում շնորհիվ Նժդեհի անգուցական տաղանդի լայն տարածում է գտնում աշխարհասփյուռ հայության շրջանակներում: Լուսաբանվում են Ցեղակրոնության գաղափարական պարունակները, բավականին մանրամասնորեն և խորությամբ վերլուծվում են «ցեղ», «ցեղակրոն» բառերի իմաստաբանությունը, դրանց փիլիսոփայությունը, որը ոչ մի գաղափարական ընդհանրություն չունենալով այդ ժամանակ եվրոպայում տարածված այլ ծայրահեղ ազգայնական, ազգայնամոլական և ալյասերված գաղափարախոսությունների հետ՝ նպատակադրված էր օտարության մեջ հային հայ պահելու և Սփյուռքը համախմբելու հայրենիքին վերադարձնելու գործում:

Հեղինակին հաջողվել է բավականին հանգամանալից կերպով ներկայացնել Տարրական շարժման էությունը, դրա ձևավորման սկզբնաղբյուրները, պատճառները: Մեկ անգամ ևս հաստատվում է այն կարևոր հանգամանքը, համաձայն որի՝ Տարրական շարժումը Ցեղակրոնության ուսմունքի շարունակությունն է և գաղափարական ժառանգորդը, որը, սակայն, ի

տարբերություն Ցեղակրոն շարժման, որը հիմնականում հայ երիտասարդներին համախմբող շարժում էր, արդեն նպատակ ուներ համախմբելու հայության բոլոր հատվածներին: Տարրական շարժման հիմքը ևս ցեղն է, և ողջ գաղափարախոսությունը կառուցված է «հայրենիք, հայկականություն, հայրենասիրություն» եռամիասնական գաղափարական առանցքի շուրջ:

Հատկապես մեծ ուշադրության է արժանի աշխատության հաջորդ մասը, որը նվիրված է նժդեհյան ուսմունքի արդիականությանը: Հեղինակը վերլուծելով այսօրվա իրականությունը, և գուցեհեռավորներ անցկացնելով նժդեհյան գաղափարախոսության հետ, հանգել է այն եզրակցության, որ նժդեհյան ուսմունքը՝ որպես ամբողջական ազգային գաղափարախոսություն, ունի ոչ միայն արդիական, այլ նաև հավիտենական նշանակություն՝ հայի ազգային դեմքը և ազգային նկարագիրը ազգերի հանրություն չկորցնելու համար: Այդ գուցեհեռավորների համակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունը բացահայտում և փաստում են նժդեհյան գաղափարախոսության, փիլիսոփայության արդիականությունն ու հրատապությունը, ինչը զգացվում է հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, որոնց ժամանակին անդրադարձել է նաև Նժդեհը:


Այսպիսով, նժդեհյան ուսմունքին, Ցեղակրոնությանն ու Տարրականությանը նվիրված ցանկացած հետազոտություն, աշխատություն արդարացված է և անհրաժեշտ:

Վ.Արդյանի աշխատությունը ժամանակակից գրականության մեջ կարելի է որակել որպես նժդեհյան գաղափարախոսության ուսումնասիրմանն ու վերլուծմանն ուղղված կարևոր ուսումնասիրություն, որը կարող է ծառայել հայ ազգին, երիտասարդությանը, գալիք սերունդներին՝ հայրենասիրության, հայապատկան գործունեության, մեր պետականության ամրապնդման և հայ ազգի հավիտենականության ապահովման բարդ և դժվար գործընթացում:

Խաչիկ ՓՄՓՈՂՅԱՆ
ՀՀ ԳԱԱ աշխարհից

Կարմիր հսկաների վերջին շունչը

Աստղագետները տեսնում են այն, ինչ տեղի է ունեցել միլիոն տարի առաջ



Շվեյցարիայի մի խումբ գիտնականներ աստղերի «մահը» բացատրում են հետևյալ կերպ.

Նրանք ենթադրում են, որ հեռավոր գալակտիկաներում իրենց գոյությունը ավարտող աստղերը նախ արտադրում են ջերմություն և գազ: Ջրվելով շիկացած գազերից ու ջերմային այլ պրոցեսներից, աստղերը կամաց-կամաց կորցնում են իրենց էներգիան և սառչում են, ինչպես, ասենք, լուսինը կամ այլ մոլորակները:

Շվեյցարացի աստղագետների կարծիքով այդ գործընթացները տևում են միլիոնավոր տարիներ, և մոլորակն էլ հարկավոր է, որ այդ երևույթների վերաբերյալ հասնեն մեզ, այսինքն՝ երկիր:

Ըստ շվեյցարացի աստղագետների, այդ աստղերը աստիճանաբար կորցնելով էներգիան, սառչում են ու մնան մեզ հայտնի մոլորակներից: Իսկ ի՞նչ կարող է լինել այդ սառած մակերևույթների տակ, մնում է առեղծված: Գիտությունը շարունակում է պարզել մի խնդիր, և դրա հետ ծնվում են տասնյակ նոր խնդիրներ ու հարցականներ:

Ներայի արձանը Օլիմպոսում

Արձանը հայտնաբերվել է Օլիմպոս լեռան շրջակայքում կատարված պեղումների ժամանակ, այն լեռան, որտեղ ըստ դիցաբանության բնակվում էին հին հունական Աստվածները: Հնագետների կարծիքով արձանը մոտավորապես 2200 տարեկան է: Ճշտե՞նք նաև, որ պեղումները կատարվում էին հնադարյան Դիոն քաղաքում, որ գտնվում է Սալոնիկից հարավ-արևմուտք, 85 կմ հեռավորության վրա:

Ծանրակշիռ տարիքը իր հետքն է թողել արձանի արտաքին տեսքի վրա: Քանդակի վրա (չափերով այն համապատասխանում է մարդկային մարմնի չափերին) չեն պահպանվել որոշ մասեր, մասնավորապես՝ գլուխը:

Ի դեպ, խնդիրը միայն տարիքը չէ: Ինչպես պնդում է հույն հնագետ, Սալոնիկի համալսարանի պրոֆեսոր Դիմիտրիս Պանտերմալիսը, որն արդեն 30 տարի զբաղվում է Դիոնի պեղումներով, մարմարյա արձանը ինչ-որ ժամանակ առաջին քրիստոնյաների կողմից օգտագործվել է որպես պաշտպանական պատի մաս:

Գիտնականը գտնում է, որ նախապես արձանը հավանաբար դրված է եղել Ջևսի տաճարում: Ի դեպ, Աստվածների ահեղ հոր՝ Ջևսի, արձանը այս սրբավայրի մոտ գտնվեց 2003 թվականին: Եթե այս վարկածը հաստատվի, քաջա այն կլինի գիտությանը հայտնի առաջին դեպքը, երբ տարբեր աստվածությունների երկու արձաններ տեղադրվել են մեկ տաճարում:

Ինչպես ենթադրում է Պանտերմալիսը, բացառված չէ, որ պեղումները շարունակելիս հայտնաբերվի նաև Աթենասի արձանը, որը նույնպես կարող էր տեղադրված լինել Ջևսի տաճարում:

Ամերիկյան կենդանաբանները հայտնագործել են մոլորակի ամենաբծախնդիր արարածներին: Դա կալիֆոռնիական ծովային խեցգետին է՝ Այդ խեցգետիններին անվանում են նաև «ջուր-թակահարներ»: Ի տարբերություն կին արարածների, որոնք ամուսին են ընտրում մի քանի թեկնածուների շրջանում, սույն խեցգետինների իգական սեռի ներկայացուցիչները ամուսին են ընտրում հարյուրավոր հավակնորդներից լույս մեկին:

Խեցգետինները սովորեցնում են մարդկանց



Խեցգետնուհին ամուսին է ընտրում ըստ վերջինիս բնակարանի հարմարությունների:

Սան-Դիեգոյի (Կալիֆոռնիա, ԱՄՆ) համալսարանի գիտնականները, որոնք ուսումնասիրել են սույն ծովային խեցգետինների ամուսնական արարողությունները, պատկերը ներկայացնում են հետևյալ կերպ: Արուները խմբերով հավաքվում են իրենց բների առջև և թափահարում անձոռնի ծանկերը՝ «եստի համեցքի» հրավեր կարդալով էգերին: Էգը, ծանր ու մեծ, մտնում է բունը, ուսումնասիրում բնակարանի պայմաններն ու չափերը, և ընտրում այն բունը, որ համապատասխանում է իր ծաշակին ու չափերին: Սովորաբար՝ համապատասխան «բնակարանը» էգը ծառում է ոչ միանգամից և խեցգետին աղջիկները ստիպված են լինում ուսումնասիրել հարյուրավոր «բնակարաններ»: Որոշ գործնական և պրագմատիկ արուներ իրենց բներում էգերի համար պատրաստում են մի քանի հարմարավետ «սենյակներ», որի շնորհիվ կարողանում են հավաքագրել ամբողջ հարեմներ: Ինչպես տեսնում ենք, կանանց այն տեսակը, որը ամուսին ընտրելիս նախապատվությանը տալիս է փեսացուներին, որոնք ապահովված են չքեղ բնակարանով, հատուկ է կենդանական աշխարհի պարզունակ տեսակների իգական սեռի ներկայացուցիչներին:

Սակայն, ի տարբերություն մարդ արարածների, խեցգետինների շրջանում ամուսնությունը տևում է 2-ից 16 օր, և նոր սերնդի լույս աշխարհ գալուց հետո ամուսնությունը գործնականում անմիջապես լուծարվում է: Ամուսինները հաշտ ու սիրալիկ բաժանվում են իրարից: Ըստ որում, ամուսինները մնում են իրենց բնակարանում, իսկ էգերը՝ հեռանում: Սովորաբար մարդկանց շրջանում մնալ երջանիկ հանգուցալուծումներ չափազանց հազվադեպ են հանդիպում, կամ գրեթե չեն պատահում:

Գուցե՞ օրինակ վերցնել խեցգետիններից, սիրելի կանայք: Այլ խոսքով, կին արարածները սովորելու բան ունեն խեցգետիններից: Իհարկե մտածել, թե, կանայք կսովորեն պորբլեմներ չստեղծել և ամեն ինչ հաշտ ու խաղաղ վերջացնել, անհույս, անհնարին գործ է:

Ահա ինչու մեզ մնում է միայն նախանձել: Պատկերացնում եք՝ ահա ամուսնացաք, անցավ երկու շաբաթ և դու ազատ ես: Գույք ու բնակարան էլ պահանջող չկա:

Ռեսուրսների կենտրոն

2007թ. մայիսի 30-ին Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայկական տարածաշրջանային բաժանմունքին կից բացվեց ռեսուրսների կենտրոն, որի բազայի վրա նախատեսվում է կազմակերպել և անցկացնել տրենինգային դասընթացներ, գիտական և տեխնիկական սեմինարներ, ինչպես նաև ՄՊՏԿ գործունեությանն առնչվող հարցերի գծով այլ համապատասխան միջոցառումներ, կազմակերպել և իրականացնել ՄՊՏԿ հեռավորական տրենինգներ մասնագիտական որակավորման բարձրացման ծրագրի գծով, օգնություն ցույց տալ նախագծերը կատարողներին մտավոր սեփականության պահպանման, տեխնոլոգիական ձևափոխությունների վերաբերյալ հարցերում և առևտրայնացման ասպարեզի գործունեության հետ կապված խնդիրներում:

Ռեսուրսների կենտրոնի հիմնական խնդիրներն են լինելու.

1. Տրենինգ դասընթացների կազմակերպում գիտության առևտրայնացման հարցերի վերաբերյալ
2. On-line ուսուցման կազմակերպում
3. ՄՊՏԿ նախագծեր իրականացնող ինստիտուտներին համաշխարհային ինտերնետային ցանցից օգտվելու հնարավորության ընձեռում
4. Թեմատիկ-աշխատանքային սեմինարների անցկացում
5. Գիտնականների և մասնագետների համար տեղեկատվության ապահովում
6. ՄՊՏԿ-ի խնդիրների և նպատակների քարոզման ուղղված միջոցառումների (ցուցահանդեսներ, պրես-կոնֆերանսներ, հանդիպումներ գիտական հասարակայնության հետ) կազմակերպում
7. Գիտական և գործարար հանրության երկկողմանի հանդիպումների կազմակերպում

2007-2008 թթ. համար ծրագրված է հետևյալ դասընթացները.

- Բիզնես-պլանի մշակում
- Բիզնեսի գնահատում
- Գիտատեխնիկական մշակումների առևտրայնացում
- Հաջողակ բանակցություններ
- Գործարար շփում և շնորհանդեսների արվեստ
- Բարձր տեխնոլոգիաների բնագավառում ներդրումների ներմուծում
- Կայուն բիզնեսի կազմակերպման հարցերում մտավոր սեփականության դերը
- Նախագծերի կառավարում
- Բիզնեսի կառավարման հիմունքներ

ՄՊՏԿ-ն միջկառավարական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1992թ. Եվրախորհրդի, Ռուսաստանի Դաշնության, Միացյալ Նահանգների և ճապոնիայի միջև փոխադարձ համաձայնության հիման վրա: Կորեայի Հանրապետությունը, Կանադան, Հայաստանը, Բելոռուսը, Վրաստանը, Ղազախստանը, Կիրգիզիան և Տաջիկստանը նույնպես միացել են ՄՊՏԿ-ի Համաձայնության հիմնադրմանը:

Կենտրոնի գործունեությունն ու ծրագրերն ուղղված են զանգվածային ոչնչացման զենքի արտադրության չտարածման աջակցմանը:

ՄՊՏԿ-ի Կառավարողների Խորհրդի վերջին՝ 42-րդ նստաշրջանում (30-ը մարտի, 2007թ.) հաստատվեցին 22 նոր ծրագրեր ավելի քան 1.3 միլիոն ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ, ինչպես նաև 4.6 միլիոն Եվրո հատկացվեց Ռուսաստանում, Հայաստանում, Բելոռուսում, Վրաստանում, Ղազախստանում և Կիրգիզիայում գործունեություն ծավալելու համար:

ՀՀ ԳԱԱ լրագրական ծառայություն

Հայաստանը Համաձայնագրին միացել է 1994 թվականին Հայաստանից ՄՊՏԿ ներկայացվել են ավելի քան 360 նախագծեր գիտության հետևյալ բնագավառների վերաբերյալ՝ ֆիզիկա, քիմիա, կենսատեխնոլոգիա, էկոլոգիա, տեղեկատվական և հաղորդակցային համակարգեր, նյութագիտություն, սարքաշինություն, ոչ միջուկային էներգետիկա և այլն: Ֆինանսավորված նախագծերի թիվը կազմում է 113, գումարը՝ մոտ 28.67 մլն. ԱՄՆ դոլար, այդ թվում կան 12 գործընկերային նախագծեր: Հայ գիտնականների կողմից ներկայացվել են նաև այլ երկրների գիտնականների հետ համատեղ նախագծեր: Դրանցից ֆինանսավորվել է 1 համատեղ նախագիծ՝ ներկայացված Հայաստանի, Վրաստանի, Դոմինիկյան և Տաջիկստանի գիտնականների կողմից, 3 նախագիծ՝ ներկայացված Հայաստանի և Վրաստանի գիտնականների կողմից, և 7 նախագիծ՝ ներկայացված Հայաստանի և Ռուսաստանի գիտնականների կողմից:

ՄՊՏԿ-ի նախագծերում ընդհանուր առմամբ ընդգրկված են 1150 հայ գիտնականներ և մասնագետներ: Իսկ նախագծերի իրականացման համար ձեռք են բերվել ավելի քան 1.900.000 ԱՄՆ դոլարի նյութեր և սարքավորումներ:

ՀՀ ԳԱԱ լրագրական ծառայություն

3 Ղափանցյանը կապ էր տեսնում Միե-րի դռան արձանագրությունում հի-շատակված Բարձր և Բազմաբոլո հիցանունների միջև: Խալդիի և Նրա կնոջ պաշտամունքի կենտրոնն էր Արդինին՝ ասորեստանյան աղբյուրների Մուսասիր-Մուծածիրը (Ուրմիա լճից հարավ-արևմուտք): Հարկ ենք համարում նշել որ Ուրարտուի տեղանունների մեջ ամենու-րեք հանդիպում ենք անվանումներ, ո-րոնք կազմվել են այս կամ այն աստծու անունից, սակայն, մասնագիտական գրականության մեջ դրանք չեն անդա-դարձել պատշաճ կերպով:

Թեյշեբա աստծուն Գր. Ղափանցյա-նը բնորոշել է որպես երկնքի, ամծրևի, ամպրոպի, քրի և կայծակի աստվածու-թյուն: Այս աստծու կինն է Բաբա դիցու-հին: Ըստ Գր. Ղափանցյանի՝ հայերը Թեյ-շեբա աստծու անունը փոխառել էին

ծուրյան հետ:

Դեռևս 1930-ական թվականներին Գր. Ղափանցյանը Արածա (Araşa) դիցանու-նը կապում էր արոտավայրերի հետ՝ ի նկատի ունենալով հայ. «արած-ել» և «արաւտ» («արած») բառերը՝ նրան բնորոշելով որպես արոտավայրերի աստված: Այս դիցանունը հետ է հավա-նաբար առնչվում Արևելյան եփրատի ասորեստանյան սեպագիր աղբյուրնե-րի Արծանիա և հայ. Արածանի գետա-նունը:


Խուտուիկի աստծուն Գր. Ղափանց-յանը բնորոշել է որպես «առողջության» աստված և այս դիցանունը ստուգաբա-նել է ուրարտ. hutuini՝ «իշխանություն» բառով: Ս. Հմայակյանի կողմից Խու-տուիկին համադրվել է հայ ժողովրդա-կան հավատալիքների մահվան հրեշ-տակ Գրողին, որի իշխանությունը տա-



Tsunami, un an après

Ինդոնեզիան ցնցումնե-րի մեջ է. այս անգամ պատճառները տարբեր ցե-ղերի ժողովրդական ընդվ-գումները չեն, այլ այն ցնցումներն են, որ օվկիա-նոսի հատակը պատճա-ռում է մի քանի հազար կողմերի վրա ապրող երկրին: Այո, երկրաշարժ, ցունամի և այլ բնական ա-ղետները, կամ դրանցից սպասվելիք վտանգը ցն-ցում են երկրին՝ ժողովր-դին պահելով մշտական լարված վիճակում:

Լարված օրեր են ապ-րում նաև տեղացի և մի-ջազգային գիտական մար-միններ, որոնք մշտական հսկողության տակ են պա-հում ստորգետնյա ցնցումները, ժողովրդին հնարավոր աղետի մասին ահազան-գելու նպատակով: Երբ գրվում էին այս տողերը հեռագրական գործակալությունը հաղորդեց ծապոնական կղզիներում ավերիչ նոր երկրաշարժի մասին:



Նապոլեոնի և չեն թունավորել

(Բոնապարտի մահվան պարճառը բացահայտված է՝ մեկընդմիջար)

Միացյալ Նահանգների Տեքսասի մա-հանգի Դալասի Հարավ-արևմտյան բժշկա-կան կենտրոնի հետազոտողների խումբը, Ռո-բերտ Ջենքի գլխավորությամբ, կարողացավ ճշգրիտ ախտորոշել Նապոլեոն Բոնապար-տի մահվան պատճառը: Նրանց կարծիքով կայսեր մահը բացատրվում է արդեն հայտնի առաջին իսկ պաշտոնական վարկածով:

Հիշեցնենք, որ 1815 թվականին Վա-թեռլոուն կրած պարտությունից հետո «Կոր-սիկացի հրեշ» աքսորվեց Սուրբ Հեղինեի կղզի և 6 տարի անց վախճանվեց 52 տարե-կան հասակում:

Հենց այն ժամանակ կատարված դիա-հերման մասնակիցները որոշեցին, որ մահ-վան պատճառը եղել է ստամոքսի բաղկերը: Սակայն այն բանից հետո, երբ 1961 թվակա-նին Նապոլեոնի մազերի մեջ հայտնաբերվեց մկնդեղ, սկսեցին լուրեր տարածվել, թե Նա-պոլեոնին բուժվելու են: Կայսեր մահը ձեռն-տու էր շատ-շատերին: Մարտի, որ Բոնա-պարտը կարող է փախչել կղզուց և կրկին պատուհաս դառնալ Եվրոպայի տիրակալնե-րի համար, կարող էր մղել նման բայի:

Սակայն եթե հավատանք նոր համալիր հետազոտություններին, ուր հաշվի առնվե-ցին ամենատարբեր տվյալներ (դիախերման արդյունքները, Նապոլեոնին բուժող բժիշկ-ների հիշողությունները, ակնատեսների նկարագրությունները, ինչպես նաև կայսեր ընտանիքի անդամների հիվանդությունները), Նապոլեոնի մահը բուժվելու էր հետևանք չէ:

Տվյալները զուգորդելով ժամանակակից բժշկության հնարավորություններին, գիտ-

նականները եզրակացրել են, որ մահվան պատճառը եղել է ներքին արյունահոսությու-նը ստամոքսում: Եվ նրանց պնդմամբ սույն ախտորոշումը վերջնական է:

Դիախերման արձանագրությունները փաստում են, որ Նապոլեոնն ունեցել է ստա-մոքսի երկու խոց, որոնցից մեկը բախանցել է լյարդ: Ռոբերտ Ջենքը և նրա օգնականնե-րը ուսումնասիրեցին 50 խոցերի և 50 ուռուցք-ների ժամանակակից նկարների առանձնա-հատկությունները և համեմատեցին Նապո-լեոնի խոցերի նկարագրության հետ: Հետա-զոտողները եկան այն եզրակացության, որ կայսրի ստամոքսային խոցերը բաղկերի ու-ռուցքի հետևանք են:

Դոկտոր Ջենքը գտնում է, որ եթե անգամ Նապոլեոնին ազատ արձակեին կամ մա փախչեր կղզուց, ծանր հիվանդությունը նրան կխանգարեր նորից բարձրանալ և որևէ դե-րակատարություն ունենալ Եվրոպայի պատ-մության ընթացքի վրա: «Անգամ մեր օրերի վիրաբուժական բարդ և կատարյալ տեխնի-կայի և բժմիական թերապիայի օգնությամբ այնպիսի բաղկերի, ինչպիսին Նապո-լեոնին էր, անհնար էր որևէ կերպ բարելա-վել հիվանդի վիճակը: Եվ եթե անգամ նրան բուժեին այսօր, աշխարհի ամենաառաջնա-կարգ կլինիկայում, մեկ է՝ Նապոլեոնը կապ-րեր ընդամենը մեկ տարի,՝ հավելել է Ռո-բերտ Ջենքը:

Եվ այսպես, տասնամյակներ շարքվող վարկածը Նապոլեոն Բոնապարտի բուժա-վորման մասին, հերքվեց միանշանակ և վերջ-նականապես: Նապոլեոնի մահվան պատճա-ռը եղել է ստամոքսի ծանր բաղկերի:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՍՈՆԱ (ՄԻ)

ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ԳՐ. ՂԱՓԱՆՅԱՆԸ ԵՎ ՎԱՆԻ ԹԱՓԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԻՅԱՐԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

փոյուզական Սաբաձիոս ձևով, որը այ-նուհետև դարձել է հասարակ անուն՝ «աստված», իսկ նրա կնոջ անունը՝ Դե-պիտ («Դեպիտ սբանչելի», «Իշտար սբանչելի») պահպանվել է հայ. «հպիտ, հպտանք, հպտիտ, հպտիմ/հպտիմ» բառերում: Թեյշեբա աստծու պաշտա-մունքային կենտրոնն էր Կուսնուն, որը տեղայնացվում է Հայկական լեռնաշ-խարհի ծայր հարավում՝ Նիբուր (Ջուդի դաղ) լեռան շրջանում և Թեյշեբաինի քաղաքը ներկայիս Երևանի մարզի տա-րածքում:

Առնի դիցանունը Գր. Ղափանցյանը բացատրել է «լեռ, բարձրություն» նշա-նակությամբ: Ն. Վ. Հարությունյանը այս աստծու անունը համեմատում է ուրար-տերեն՝ arni և arni(u)sinili՝ «արիություն, սխրագործություն» բառերի հետ (Գր. Ղափանցյանն arni(u)sinili բառին տալիս է «չինարարության, կառուցում» իմաս-տը): Դետևաբար, Առնի աստվածը հա-մարվում է ուժի, առնականության և սխրագործության աստվածություն: Նրա անվան հետ է կապված նաև ուրարտա-կան Արնա (Arna) բնակավայրի անունը, որը գտնվում էր Արմաղիլի նահանգում՝ Վանա լճի արևելյան ափից ոչ հեռու (պատմական Վասպուրական):

Գր. Ղափանցյանը Շեթիթու դիցանու-նը դասել է ուրարտական պանթեոնի սե-նական ծագում ունեցող աստվածների շարքը և այն համարել միջագետքյան Տիսուրի դիցունու Սաբիթու անվան հետ: Իսկ Ն. Աղոնը Շեթիթու դիցանունը հա-մարում է Արևելյան եփրատի աջ ափին՝ այժմյան Բալուխ մոտ տեղադրվող Շեթ-թերիա քաղաքի հետ՝ այն համարելով Շեթիթուի պաշտամունքային կենտրոնը:

Կուեռա դիցանունը Գր. Ղափանցյանը համարում է ուրարտ. q(u)ra բառի հետ՝ «երկիր, ցամաք, հող» նշանակությամբ՝ նրան համարելով «երկրի, ցամաքի» աստվածություն: Այս դիցանվան հետ է առնչվում Սարդուրի II-ի Իզդուլի արձա-նագրության՝ Կուեռայի ընծա (URU Quera taše) քաղաքի անունը: Վերջինս հիշվում է URU Taše քաղաքից հետո: Ըստ Ն. Վ. Հարությունյանի՝ Ռուսա II-ի Ձվարթնոցի արձանագրությունում հիշատակվող և ըստ երևույթին Արարատյան դաշտավայ-րի մի մասը կազմող Կուառլինի անվան-ված հովիտը՝ KUR Quarlino hubi, ինչպես նաև Ութուզախի ցեղի Կուարզանի (Quarzani) արքայի անունները առնչվում են այս դիցանվան հետ:

Ադարուբա աստծուն Գր. Ղափանցյա-նը բնորոշում է որպես ծնունդն ու սե-րունդը հովանավորող աստվածություն և նրան համարել է ասուրա-արամեա-կան Աթար՝ սիրո, պտղաբերության, բու-ծող և ծնունդ հովանավորող աստվա-

րածվում էր կյանքի և մահվան վրա:

Գր. Ղափանցյանը անդրադարձել է նաև Երեմիա Մեղրեցու բառարանում հի-շատակված հայ. Մեղարդ՝ «լուսին» և ուրարտերեն Շելարդի կարգացվող Լուսնի աստծու անունների նմանության վրա: Նա այս դիցանունը տառադար-ծում է Շելարդի ձևով և գտնում է, որ Մեղարդը Սե-դարդ բառի ձևն է և արդ-յունը է երկաթագիր Ս և Մ տառերի շփո-թության: Ըստ նրա՝ «Sielardi-ն բարդ բառ է, կազմված է šel՝ «գիշեր» և ardi՝ «արև» բառերից, այսինքն՝ լուսինը պատկերացվել է որպես՝ «գիշերվա արև»: Նման կազմություն ունի նաև Sinuirdi դիցանունը: Այս դիցանուննե-րով տեղանունների հանդիպում ենք Ար-մարիլի երկրում՝ Ծինի-ու-նակ, Արդի-ու-նակ ձևերով: Ս. Հմայակյանը հակված է այս աստծու անունը ընթերցել «Me-e-la-ar-di ձևով, որտեղից և հայերեն Մեղարդ բառը: Նա իր կարծիքը հիմնավորում է այն փաստով, որ հնարավոր է թվում դիցանվան հետ առնչել Ուրարտուի ար-քա Մեղարտուա Ռուսայորդու անունը:

Միերի դռան և Կարախանի արձա-նագրություններից հայտնի է Ուրա աստվածը: Հնարավոր է, որ նրա անու-նից է ծագում Մա լեռան անունը, որը գտնվել է, ամենայն հավանականությամբ, Վանա լճից հյուսիս: Գր. Ղափանց-յանը այս աստվածությանը տալիս է շունեռաբաբազական ծագում և նրան Ուրաշ ձևով համարում բաբոնյան գար-նան և կռվի աստված Ուրայի հետ:


Սարդի դիցունու անունը դեռևս Ա. Մեյսը կապել է լիդիական Σαρδεις՝ «տա-րի» կամ «արևի աստված» բառի հետ: Գր. Ղափանցյանը հետևելով Սեյսին՝ բերում է նույն մեկնաբանությունը, և այս դիցանունը իր հերթին համարում իրանական sard՝ «տարի» բառի հետ: Ըստ նրա մեկնության՝ ուրարտացինե-րը Սարդուրիի (Sarduri)՝ Sardi դի-ցանվան առաջին վանկում կարդացել են իշթար աստվածուհու անունը:

Արժեքավորելով Գր. Ղափանցյանի ներդրումը այս բնագավառում՝ կարող ենք արձանագրել.

ա) նա է դասակարգել ուրարտական աստվածությունները արական և իգա-կան 6 խմբերի,

բ) ծիշտ է բնորոշել Խալդի աստծու դերն Ուրարտուում՝ որակելով այն որ-պես «խաղամոլություն», ինչն այսօր էլ հիմք է տալիս անելու նոր եզրակա-ցություններ,

գ) առաջինն է եղել ուրարտագի-տության մեջ, որ բնորոշել է դիցարա-նի՝ Iphari, Aia, Bar ia, Uia, Arua և Aini աստվածությունների իգական լի-նելը:



Աշխարհամասերը մոտենում են և շուտով դրանք կմիանան ու համաշխարհային օվկիանոս կդառնան մեկ մայրցամաք: Այդ «շուտովը», սակայն, մի քանի միլիոն տարի է տևելու:

Վերնագրում տեղ է գտել նաև «Գիտություն» թերթի հունիսին լույս տեսած երրորդ համարի սարկազմով լի հոդվածի անվանումը: Չնայած թերթի խմբագրականում ոչ մի բարոյական իրավունք չունեն վիրավորել որևէ մեկին (նույնիսկ չգիտես ինչու թերթի համար հոդված չգրող բյուրականցիներին), այնուամենայնիվ ես կփորձեմ ընթերցումով մոտենալ հարցին և գտնվել այն գիտաշխատողի վիճակում (բնականաբար ոչ բացարձակ ազնվասիրտ վիճակում գտնվող, քանի որ այդ վիճակից որևէ էական խոսք չի ելնում), որը փորձում է տեղեկատվության վերաբերյալ կիսել իր կարծիքն ընթերցողի հետ: Կփորձեմ այդ բանն անել անկախ այն բանից, թե իրականում ինչ հանգստի վիճակ են վերագրում ինձ թերթի աշխատակիցները:

Այդ առիթով նախ պետք է նշել, որ աստղային բոլորակները Տիեզերքում տեղի են ունենում բավականին հաճախ՝ ինչպես մի քանի տասնյակ, այնպես էլ հազարավոր ու միլիոնավոր լուսատարի (հայերենում չկա «լուսային տարի» բառը) հեռավորությունների վրա: Փոքր հզորությամբ բոլորակները բազմաթիվ են և ամենուր, մասն բոլորակներ ցուցադրում է նաև Արեգակը, չնայած այն հարաբերականորեն հանգիստ աստղ է համարվում: Ի դեպ, առավել հայտնի բոլորակները կարծիք բոլորակներ են, որոնց հետազոտություններում մեծ դեր է ունեցել Բյուրականի աստղադիտարանը, և որոնց տիեզերածնական «կարգավիճակը» պարզվել է հենց Բյուրականում: Այս աստղերը բոլորակն առավելագույն փուլի ժամանակ իրենց պայծառությունը մեծացնում են միջինում մի քանի անգամից մինչև մի

Վերադառնալով «Գիտություն» թերթում տպագրված տեղեկությանը, կուզենայի ավելացնել հետևյալը: Աստղագետների կողմից մինչև օրս հայտնաբերված ամենահզոր աստղային պայթյունը, որի մասին լայն հասարակությունը տեղեկացվեց այս մայիսին, դիտվել է NGC 1260 գալակտիկայում: Բայց այդ գալակտիկան գտնվում է ոչ թե 150 հազար, այլ 240 միլիոն լուսատարի հեռավորության վրա: Այդ աստղը իրականում հայտնաբերվել էր 2006թ. սեպտեմբերին և գիտական գրականության մեջ կոչվում է SN2006gy: Այն մոտավորապես 100 անգամ ավելի հզոր էր, քան սովորական գերնորները: Հետաքրքիր է նաև այն, որ այս աստղի պայծառության անը բավականին դանդաղ է եղել: Առավելագույն լուսատվության պահին այդ աստղը ճառագայթում էր 50 միլիարդ անգամ ավելի քան Արեգակը: Ավելին, այդ ժամանակի դրա ճառագայթումը 10 անգամ ավելի էր այն գալակտիկայի ճառագայթումից, որի մեջ այն պայթել էր: Ենթադրվում է, որ դրա զանգվածը մինչև պայթյունը կարող էր հավասար եղած լինել Արեգակի մոտավորապես 150 գանգավածի: Այդ գերնորի հայտնաբերման և ուսումնասիրման նպատակով կիրառվել են Հավայան աստղադիտարանի 10 մետրանոց, Լիկի աստղադիտարանի օպտիկական, ինչպես նաև ՆԱՍԱ-ի Զանդերա ուղեծրային ռեմոտեմանդի հիմնականները:

Ցավոք սրտի մեզ անհայտ է, թե որտեղից է «համաշխարհային լրատվական միջոցների կողմից հրապարակված մոր սենսացիան մեր մոլորակից 150 հազար լուսային տարի պայթած գերնորի մի աստղի մասին, որը 150 անգամ մեծ է Արեգակից».

«Ի՞նչ կասեն բյուրականցիները» սեղեկասվության մասին

քանի հարյուր անգամ, իսկ բոլորակները կարող է տևել մի քանի վայրկյանից մինչև մի քանի ժամ: Կրկնում են, խոսքը վերաբերում է միջին բնութագրիչներին:

Էներգիայի մեծ արտազատումով բոլորակներն ավելի հազվադեպ են: Դրանց մի տեսակը հայտնի է հին ժամանակներից և ստացել է «Նոր աստղ» անվանումը: Իհարկե, իրականում դրանք ոչ թե նոր, այլ պարզապես բոլորակն հետևանքով պայծառացած ու դրա շնորհիվ տեսանելի դարձած աստղեր են, որոնք, ի տարբերություն սովորական բոլորակի աստղերի, բավականին դանդաղ են վերադառնում իրենց նախնական վիճակին: Նորերը սովորաբար իրենց լուսատվությունը մեծացնում են տասնյակ հազարավոր անգամ, իսկ դրանց «վերադարձն» իրենց նախնական վիճակին տևում է ամիսներ, ինչն էլ թույլ էր տալիս հեշտությամբ հայտնաբերել դրանք ու դիտել երկար ժամանակ:

Սակայն աստղերի աշխարհում ամենահզոր երևույթը «Գերնորի» բոլորակն է, երբ աստղը իր պայծառությունը մեծացնում է հարյուր միլիոնավոր անգամ, այսինքն, բոլորակն մաքսիմումում այն ճառագայթում է այնքան էներգիա, որքան առաքում են հարյուր միլիոնավոր աստղեր միասին: Եթե բոլորակը կամ նոր աստղերը բոլորակից հետո վերադառնում են իրենց նախնական վիճակին, ապա գերնորի երևույթն աղետալի հետևանքներ է ունենում աստղի վրա: Այն պարզապես պայթում է, դեմ չպրտելով իր արտաքին շերտերը, որոնք մեծ արագությամբ հեռանում են նրանից, առաջացնելով միգամածություն: Գերնորի պայթյունից հետո մնացած նյութից ձևավորվում է բաբախիչ:

Գերնորից չափազանց հազվադեպ երևույթներ են: Ըստ վիճակագրության մեր Գալակտիկայում Գերնոր է պայթում միջինում երեք հարյուր տարին մեկ անգամ: Սակայն, մյուս կողմից, քանի որ գերնորի լուսատվությունն անհամեմատ բարձր է մյուս դասերի աստղային բոլորակների համեմատությամբ, ապա դրանք դիտվում են շատ մեծ հեռավորություններից և կարող են հայտնաբերվել նաև այլ գալակտիկաներում: Այս հանգամանքն օգտագործվում է տիեզերաբանական և տիեզերածնական տարբեր խնդիրների լուծման նպատակով, որոնց թվում ամենակարևորներից մեկը 20-րդ դարի վերջին Տիեզերքի լայնացման արագացող բնույթի հայտնաբերումն էր:

ինչպես պնդում է «Գիտություն» թերթը: Թվում է, թե այս գալակտիկայում հաղորդագրությունը ստեղծվել է մի քանի տարբեր հաղորդումների միավորումից: Բանն այն է, որ բոլորակի վերջերս տարածվեց Կանադայի աստղագիտական ընկերության տարեկան ժողովին հայտարարված և մեկ հետաքրքիր նորություն, որը վերաբերում էր մեզանից 20000 լուսատարի հեռավորության վրա հայտնաբերված առաջին հայտնի ամենագանգվածեղ աստղին: Մակայն այս աստղն առաջին չի պայթել: Այն գտնվում է NGC 3603 աստղախումբում և հանդիսանում է աստղազոյգի անդամ, ինչը և թույլ է տվել որոշել դրա զանգվածը, որը հավասար է Արեգակի 114 գանգավածի: Այդ դեպքում որտեղից է 150 թիվը: Արդյո՞ք դա նախորդ աստղի վերաբերյալ արված ենթադրությունն է, թե՞ մի այլ բան, դժվար է ասել, ելնելով թերթում տպագրվածից: Բանն այն է, որ ըստ ժամանակակից պատկերացումների Արեգակի 150 գանգվածն այն սահման է, որից ավելի զանգվածեղ աստղեր լինել չեն կարող: Եվ հենց դա է պատճառը, որ նախորդ SN2006gy-ի մասին այդպիսի ենթադրություն էր արվել:

Եվս մեկ անգամ անդրադառնալով SN2006gy գերնորին պետք է հիշատակել արդեն մեր Գալակտիկային պատկանող մեկ այլ աստղ՝ Ուղնուրդի Էտան: Համարվում է, որ այն նման է պայթած աստղին: Հարավային երկնքում դիտվող այս աստղը գտնվում է մեզանից մոտավորապես 7500 լուսատարի հեռավորության վրա և Արեգակից հինգ միլիոն անգամ ավելի պայծառ է: Այդ աստղի զանգվածը, ըստ գնահատականների, կարող է հավասար լինել 80-100 արեգակնային զանգվածի: Այն պատկանում է փոքրաթիվ Պայծառ կապույտ փոփոխականների թվին, որոնց լուսատվությունը, ինչպես ընդհանրական անվանումն է հուշում, շարունակ փոփոխվում է: Այդ աստղը հայտնի է նաև նրանով, որ 1843թ. այն բոլորակ է ու գալի ժամանակ երկնքի հորիզոնից աստղի էր իր պայծառությամբ: Այդ բոլորակն հետևանքով դուրս է գնում իր գալի քանակությամբ մյուս, որը միգամածություն է առաջացրել, ինչը դիտվում է մինչև օրս: Իսկ այս աստղն այստեղ հիշատակում ենք միայն այն պատճառով, որ այն կարող է օրերից մի օր պայթել SN2006gy-ի նման, չնայած անհնար է որևէ կանխատեսում անել, թե երբ կարող է լինել դա:

Սահարան բացում է գաղտնիքները

Այսօր գիտությունը անմասնադատ հայտնաբերություններ է կատարում մեր տիեզերական անհուններում:

Բայց զարմանալի են նաև երկիր մոլորակի տարբեր անկյուններում կատարված պեղումների արդյունքները:

Երբ գիտնականները Նիգերիայի Պանոս տեղավայրում ուսումնասիրություններ էին կատարում, ակամայից մտածեցին, թե ինչի է նմանվում կյանքը երկրի վրա նրա մահվանից առաջ:

Վերջերս այնտեղ հայտնաբերված բրածոները անսպասելի պարզաբանություններ են տալիս Պանոսի կյանքի բուսական և կենդանական աշխարհի մասին:

Նիգերիայի Սահարային հարող ամայի ու քարքարոտ կարմրագույն տաքածությունը, որ ձգվում է հարյուրավոր կիլոմետրեր խիստ անհրապույտ տեսք ունի: Այն գրավում է միայն թուշվորների և հնաբան-հնէագետներին: Վերջիններս ուսումնասիրում են այն



գաղտնիքներ, որոնք վկայում են երկրի վրա կյանքի գոյության ավելի քան 250 միլիոն տարվա պատմությունը:

2003-2006 թթ. գիտական արշավախմբերը պարզել են, որ ճգնաժամից առաջ այդ տեղանքը եղակի լանդշաֆտ է ունեցել և ծածկված է եղել հարուստ բուսականությամբ:

Կցանկանալի վերջում մեկ նկատառում ևս ավելացնել: Լրատվական միջոցներից շատերն են իրենք իրենց թույլ տալիս նաև չիմանալով իրենց հաղորդագրություններ տարածել: Բայց այդ բանն անթույլատրելի է Գիտությունների ազգային ակադեմիայի թերթին, որը պետք է հրապարակի բացառապես ստուգված և ճիշտ տեղեկատվություն: Եվ որքան էլ Բյուրականի աստղադիտարանի աստղագետները չեն զբաղվում Արեգակնային համակարգի մարմիններով, այնուամենայնիվ ստիպված են իմ հարաբերական հանգստի վիճակից ուշադրություն հրավիրել ևս մեկ կոպիտ սխալի վրա: Գրելով «բազմաթիվ աստերոիդները, որոնք այցելելով հեռավոր գալակտիկաներից...» արտահայտությունը, արդյո՞ք դրա հեղինակը փորձել է հաշիվ տեղ իրեն, թե դա ինչ է նշանակում, իսկ եթե այո, ապա արդյո՞ք թերթը համարում է, որ բույլատրելի է ընթերցողին այդպիսի հրեշտակոթ բյուրեղացության մեջ գցել:

Ավտիվ վիճակում գտնվող լրագրողների հանդեպ անկեղծ հարգանքով՝

Հայկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բյուրականի աստղադիտարանի տնօրեն

Հ. Գ. Տպագրության ընդունելու դեպքում, խնդրում են, ցանկացած խմբագրական միջամտություն համաձայնեցնել հեղինակի հետ: ՀՀ

Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Դ. Նարեկյանի սույն նամակը մեզ ոչ միայն ուրախություն դառնալուց, այլև լրացուցիչ տեղեկատվություն հաղորդեց խնդրի առարկա նյութի մասին: Մեր հրապարակումը, հակառակ, որ տպագրվել է «Գիտություն» թերթում, չունի տիեզերագիտության վրջին խոսքը լինելու հավանություն: Նման հավանություն չի կարող ունենալ և ոչ մի լրատվական միջոց, քանզի խոսքը մի երևույթի մասին է, որի բույն գիտական ֆնտրություններն ու ուսումնասիրությունները հիմնվում են վարկածների, ենթադրությունների, փորձերի երևույթների վերլուծությունների վրա:

Գերհզոր սարքավորումների, տիեզերականների հետազոտման շնորհիվ գիտության այդ բնագավառը հարստանում է նորանոր նյութերով, և վստահորեն կարելի է ասել, որ ինչպես տիեզերքն է անհուն, անվերջ, օգուց այդպիսին է և գիտությունը, որի ամեն մի նվաճում, հայտնաբերություն, միաժամանակ մոր խնդիրն է ծնունդ ու զարթոցանք բացահայտել:

Մենք շնորհակալ ենք Դ. Նարեկյանին, որը խիստ օգտերաշիվ արձագանքներ են թերթի հրապարակմանը: Նեմե, որ մենք այլ նպատակ չէինք հետադարձում. մեր նպատակն էր լսել մեր բյուրականցիների կարծիք լրատվական միջոցների (ոչ հայկական) հրապարակումների վրա: Որը և տեղի ունեցավ: Հուլիսի 26-ին, որ հրապարակվելով Բյուրականի աստղադիտարանի տնօրենի սույն նամակը, մենք հնարավորություն ենք տալիս մեր ընթերցողներին լրացուցիչ տեղեկատվություն ստանալ տիեզերքում կատարվող երևույթների վերաբերյալ: Ինչ վերաբերում է մեր հրապարակման մեջ տեղ գտած «Տիեզերական» բառին, որն անձնություններից, առաջ ղեկավար է ասել, որ հենց այդ սխալներից խուսափելու համար է, որ մեր թերթը դիմում է բյուրականցիների օգնությանը և, ցավով, միշտ չէ, որ վերջիններս արձագանքում են մեզ, որի դաժանություն էլ մենք ստիպված դիմում ենք լրատվական այլ միջոցների հրապարակումներին («Լյա Ռե-սեր», ռուսական «Կեսի» և «Կենյա» հեռուստաընկերությունները, նաև ոչ հայկական թերթեր):

Ինչն է, թեկուզ մեր «սխալներն» անդրադառնալու գնով ուրախ ենք, որ Դ. Նարեկյանին ի վերջո որոշ զանազան հաղորդեց խնդրի առարկա նյութի մասին: Մեր ընթերցողները գոհ կլինեն: Մենք գոհ ենք...

Զնորհակալություն...

«Գիտություն» թերթի խմբագրություն

Գիտություն

Գլխավոր խմբագիր Վլադիմիր ՍՈՒՐԱՂՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24դ, հեռախոս՝ 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 18.07.2007թ.

"ГИТЮН" ("Hayka") razeta HAH PA